

ԳՈՀԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

ՆՈՐԱՅԻ ԲՅՈՒՋԱՆԴԱՅՈՒԹ «ՎԵՆԵՏԻԿ ԵՒ ՎԻԵՆՆԱ» ԱՆՏԻՊ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս տարի՝ 2015 թվականին՝ լրանում է հայ ազգի երախտավոր, մեծանուն հայագետ, բառարանագիր նորայր Բյուզանդացու ծննդյան 170-ամանական 100-ամարին։ Սա լավագույն առիթ է մեկ անգամ ևս հիշելու, անդրադառնալու նրա կյանքին ու գործունեությանը։ Իր ապրած 70 տարիներից ավելի քան 50-ը նա նվիրել է հայոց լեզվին և հայ մատենագիտության ուսումնասիրման գործին։ Նրա տաղանդի և հայագիտության մեջ ունեցած անուրանալի վաստակի մասին հրապարակումներով են հանդես եկել բազմաթիվ հայագետներ։ Մեջբերենք դրանցից մի քանիսի կարծիքները։

«Հայ գասական բանասիրության այս բազմահմուտ գործիչը ավելի քան կես դար հետագոտել է մեր մատենագրությունը և գրել բազմաթիվ աշխատություններ, որոնք հայտնի են իրենց հազարեալ սրամիտ վճիռներով։ Դժվար է գտնել մեսրոպատառ դպրության արշալույսին ստեղծված որևէ գրավոր հուշարձան որի ուսումնասիրությամբ զբաղված շինի հմուտ գիտնականը»¹։ «Նրա տպագիր՝ եւ առաւել եւս անտիպ գործերի ամբողջութիւնը մտածել է տալիս, որ հեղինակը հայերենագիտութեան՝ բառարանագրութեան, բանասիրութեան, գրաբար բնագրերի սրբագրութեան, հայ հին և միջնադարեան գրականութեան գիտակ հսկաներից է»²։ «Նորայր իբրեւ բառաքնին՝ հեղինակութիւն էր եւ է,

¹ Տե՛ս Գ. Աբգարյան, «Նորայր Բյուզանդացու անտիպ երկերը», էջմիածին, 1945, օգոստոս-սեպտեմբեր, էջ 35։

² Տպագիր գործերն են՝ ա. Հայկական բառաքննութիւն, ուղղութիւնք ընթերցուածոց մատենագրութեանց նախնեաց եւ նշանակութեան բառից ինչ, Կ. Պոլիս, 1880 (աշխատությունը պարունակում է գրչիների սխալների 200 ուղղում), բ. Բառագիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն, Կ. Պոլիս, 1884, գ. Քննասէր հայագիտական հանդես, Ստոկհոլմ, 1887 (մայիսի 15-ին իր միջոցներով լուս է ընծայել Ա. պրակը, դեկտեմբերի 3-ին՝ Բ. պրակը։ Հանդեսը տպագրված է ծոռագիր ընդօրինակուրյունից վիմատիպ եղանակով։ 2005 թ. այն վերահրատարակվեց, տե՛ս, Գ. Տեր-Վարդանյան, «Նորայր Բյուզանդացու «Քննասէր»-ը», Պատմա-Բանասիրական հանդես, Եր., 2005, էջ 1-43), դ. Կորին Վարդապետ եւ նորին թարգմանութիւնք, Տիգիս (Թիֆլիս) 1900։ Հեղինակն այն նվիրել է կնոջ՝ Սելմա Յակոբսոնի հիշատակին (տիտղոսաբերքին՝ «Օրհնեալ եղիցի յիշատակ Տիկին Սելմա Յակոբսոնի. Նորայր»), ե. Քննագատութիւն Հայրուսակի, Վիեննա, 1925 (1921 թ. հրատարակվել էր «Հանդէս Ամսութեայր»-ում)։ Աշխատության մեջ բացահայտված ու ցույց են տրված Դ. Ալիշանի գրքում տեղ գտած սխալները (305 ուղղում), գ. նախնիք, Ժնեվ, 1996, տպագրել է Մ. Մինասյանը (գրքում կա ավելի քան 10.000 սրբագրույուն), է. Բառագիրք ստորին հայերէնի ի մատենագրութեանց ժեղ-ժեղ գարուց, Մ. Մինասյան, Ժնեվ, 2000։

³ Տե՛ս Մ. Մինասյան, «Ն. Բիկանդացու կեանքը, հրատարակութիւնները եւ դիտանք», Բազմագէպ, Վենետիկ, 1983, էջ 39։ Մարտիրոս Մինասյանը (Ժնևի համալսարան) 1982 թ.

իւր ամէն մի վճիռներն ունին իրենց հետեւ ապացոյցներ. խղճմտիկ են իւր նկատողութիւնները, ամուր՝ հաստատութիւնները եւ հմտալից՝ տեսութիւնները: Նա բառագրքի մարդ էր»⁴: «Մեծ անհատականութիւն կայ եւ ինքնաստեղծ տաղանդ՝ նորայր Բիւզանդացւոյն խորհելու, քննելու եւ գրելու կերպին մէջ քան մնացեալներուն: Նորայր շընդունիր իբր պատգամ... ուրիշի մը գրուածները, այլ կքբնէ: Քննութեան այս զորեղ ոգին է որ կշեշտէ նորայրի անհատականութիւնը եւ առանձին դիրք մը կու տայ իրեն՝ քննասիրութեան ստացուածքի մեջ: Վկայել ուղղութեան համար, հրապարակել սխալը, ահաւասիկ միակ ազգու խթանը կամ գործիքը յառաջադիմութեան»⁵: «Նա ո՛չ միայն սովորական տաղանդավոր անհատ է եղել, այլև հանճարել գիտության տեր հայագիտության ասպարեզում, զարմանալի ջանասիրության օրինակ, բարակամիտ, երկարամիտ և կորովի համբերատար»⁶: «Խոսելով նրա հետ դուք ստանում եք այն տպավորությունը, որ գործ ունեք ոչ թե... հասարակական և ազգային հրատապ խնդիրներով տարված մի մտածողի հետ, այլ մի խորենացու, մի եզնիկի, մի Փալստոսի, վերջապես մի մագաղաթյա պատմական նյութերով լի գրվածքի հետ»⁷:

Նորայր Բյուզանդացին (Ստեփանոս Գագելյան-Ճիզմեճյան-Թերզեան) ծնվել է Կ. Պոլսի Եերա թաղամասում 1845 թ. մարտի 16-ին: Կրթությունն ստացել է Վենետիկի Ս. Ղազար վանքում: 1857 թվականից սկսած, ինչպես ինքն է գրում «մասնաւոր եռանդութեամբ» զբաղվել է հայերեն և ֆրանսերեն լեզուների խորացված ուսուցմամբ: 1866 թվականի ապրիլի 8-ին, քսանմեկ տարեկան հասակում, ձեռնադրվել է քահանա, ստանալով Հարություն Թերզոնց անունը:

1866-1868 թթ. Հայր Հարությունը որպես հայերենի և ֆրանսերենի ուսուցիչ պաշտոնավարել է Վենետիկի Խաֆայելյան վարժարանում: Գիտական գործունեությամբ սկսել է զբաղվել դեռևս ուսումնառության տարիներին: Նրա առաջին հոդվածը՝ «Մեր նախնեացմէ ձեռուրնիս հասած ձիաբուծութեան եր-

Եզնիկի բննական նոր հրատարակություն պատրաստելու առիրով, Վաղուցի «Ղուկասյանց Եղբայրների Հաստատության» կողմից գործուղվում է Գյուտերոգրի կենտրոնական գրադարան, որտեղ՝ իր կնոջ՝ Արլիք Մինասյանի հետ մի ժանի օրում (դեկտեմբերի 6-9) ցուցակագրում են (հինգ մետր երկարությամբ) նորայրի ամբողջ դիվանը և 1983-ին այն ներկայացնում տպագրության, նշվ. աշխ. էջ 62-96:

⁴ Տե՛ս, Ա. Ալիքնեան, «Նորայր Ն. Բիւզանդացի», Հանդէս Ամսօրեայ, 1921, յունուար-փետրուր էջ 96:

⁵ Տե՛ս Գր. Մալխաս, «Մատենախօսական, Կորյուն վարդապետ եւ նորին բարգմանութիւնն», Հանդէս Ամսօրեայ, 1902, էջ 244:

⁶ Տե՛ս Ե. Շահազիկ, «Նորայր Բյուզանդացին և նրա գրական ժառանգությունը», էջմիածին, 1950. մարտ-ապրիլ, էջ 30:

⁷ Տե՛ս Ալ. Արելյան, «Հիշողություններ Նորայր Բյուզանդացու մասին, Ստոկհոլմում և Վենետիկում», Հայ համայնք շաբաթաթերթ, 1917, նոր նախինսան, թիվ 17:

կու գրուածները» խորագրով, լուս է տեսել 1867 թ. («Բազմավէպ»-ում): 1868-1869 թթ. վարել է վանքի մատենադարանապետի և «Բազմավէպ» հանդեսի տեսչի պաշտոնները: 1868 թվականից սկսել է աշխատել իր «Ֆրանս-հայերեն» բառարանի վրա:

Այդ ժամանակահատվածում առողջական վիճակի վատթարացման պատճառով, Հայր Հարությունը, բժշկի խորհրդով և աբբահոր թուլավությամբ՝ վերադառնության է անցել հայ կաթողիկե եկեղեցում, պատարագ մատուցել, մինչև իսկ ստանձնել վարդապետական գավազան բռնելու իրավունք:

1870-1872 թթ. որպես ուսուցիչ պաշտոնավարել է Քաղկեդոնի Միսիթարյան վարժարանում⁸:

1873 թվականին թողել է քահանայությունն ու հեռացել Միսիթարյան Միաբանությունից: Նրա Միաբանությունից հեռանալու պատճառը երկար ժամանակ անհայտ է մնացել: Սկզբում ենթադրվել է, թէ նա սիրահարված է եղել և դուրս է եկել վանքից ամուսնանալու համար, բայց հետո պարզվել է, որ նա բանադրված է եղել⁹ Պիոս պապի կողմից և ստիպված թողնել է քահանայությունն ու հեռացել Ս. Ղազարից, որի պատճառով էլ համարվել է հերետիկոս և հալածվել:

1876 թվականից Հարություն Թերզոնցն իր նամակներն ու աշխատությունները սկսել է ստորագրել Նորայր Ն. Բյուզանդացի Néandre (Norayr) de Byzance կամ պարզապես՝ Նորայր:

1881 թ. Կ. Պոլսում ամուսնացել է Շվեդիայի արքունիքի լուսանկարչուհի, ազգությամբ շվեդ Սելմա Յակոբսոնի հետ և 1882-ից տեղափոխվել Ստոկհոլմ,

⁸ Այդ ընթացքում, նյութական վիճակը բարեկավելու համար, Հայր Հարությունը գրաբարի և աշխարհաբարի մասնավոր դասեր է տալիս վարժարան հանախող երկու սաների, որոնց հարուատ վաճառական հոր որոշմամբ, որպես սաների ոսուցիչ և խնամակալ-դաստիարակ 1872 թ. նրանց հետ մեկնել է Լոզան, իսկ 1873-ի դեկտեմբերի 18-ին տեղափոխվել Փարիզ, որտեղ իր բառարանի վրա աշխատելու համար այցելել է Ազգային գրադարան (Bibliothèque nationale de France), որտեղ հայերեն ձեռագրեր կան:

⁹ Երբ 1869 թ. Հարություն Թերզոնցը փոխադրվել է Կ. Պոլսի, Պոլսում խմբություններ էին սկսվել ազգային-կրոնական խնդիրների հետ կապված: Հայ կարությունների պատրիարք Անտոն Հասունյանը և իր անոնքը կրող «Հասունյան կուսակցությունը», որը ձևավորվել էր դեռևս 1850-ական թվականներին, Կատիկանի սարդաններով դավանարանական պայման է մղել եղմիածնի կարողիկոսության և Կ. Պոլսի պատրիարքարանի դեմ և, միջոցների մեջ խտրություն շղնելով, դավանափոխ արել Հայ Սոսելական եկեղեցու հետևորդներին, ինչը զայրացր է առաջացրել նոյնիսկ կարողիկ հայ հոգևորականների մեջ, որոնք աջակցել են հականասունյան խմբակցությանը, պայմանական հայոց լեզվի և ազգային ավանդույթների պահպանման համար: Բազմարիվ հոգևորականների թվում եղել է նաև Հարություն Թերզոնցը: 1870 թ. ապրիլի 17-ին Հայր Սահակին հղած նամակում հայտնում է, որ Հասունյան խնդիրների պատճառով իրեն և 37 համանայի գրկել են «Փ պատարագելոյ և յամենայն համանական պաշտամանց»: Տե՛ս Մ. Մինայան, նշվ. աշխ., էջ 43:

որտեղ ապրել է ավելի քան քսան տարի՝ «միակ պարապունք ունելով զ’ուսումնասիրութիւն Հայ լեզուի եւ գրականութեան»: Գտնվելով հայագիտությամբ զբաղվելու համար «անյարմար վայրում», կտրված լինելով հայ մշակութային կենտրոններից, հաճախ ձեռքի տակ շունենալով անհրաժեշտ գրականություն, նա շարունակել է աշխատել և իր գրած բազմաթիվ հոդվածներով աշխատակցել հայագիտական հանդեսներին ու պարբերականներին («Մասիս»-ը, «Լոյս»-ը (Կ. Պոլիս), «Բանասէր»-ը (Փարիզ), «Լումայ»-ն, «Հանդէս Գրական»-ը, «Մշակ»-ը (Թիֆլիս), «Բազմավէպ»-ը (Վենետիկ), «Հանդէս ամսօրեայ»-ն, «Հուշարձան»-ը (Վիեննա) և այլն): Անի նաև XIX դարում Թուրքիայում հայկական ջարդերը դատապարտող հոդվածներ՝ հրատարակված 1896 թ. շվեդական “Aftonbladet” և “Stockholms Dagblad” թերթերում:

Նամակագրական կապեր է ունեցել հայտնի հայագետների հետ, ինչպիսիք են՝ Մ. Օրմանյանը, Ն. Ակինյանը, Ն. Մառը, Լեոն (Առաքել Բաբախանյան), Ստ. Մալխասյանցը, Կ. Եզնարիկը, Գ. Հովսեփյանը և այլն: Նամակագրություն է ունեցել նաև հայ աշխարհահոչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկով հետ¹⁰:

Կնոջ մահից հետո (1899), 1903 թ. տեղափոխվել է Վենետիկ, որտեղ էլ ապրել է մինչև կյանքի վերջը: Մահացել է 1915 թ. գեկտեմբերի 25-ին: 1924 թվականին, համաձայն իր կտակի՝ աճունը տեղափոխվել է Շվեդիա և ամփոփվել Ստոկհոլմի նախապես իր ձեռքով սարքած գերեզմանում՝ կնոջ կողքին:

Նորայրի մահվանից հետո երկար տարիներ հայ հասարակայնության համար նրա ձեռագիր աշխատությունները կորած են համարվել: Ինչպես իրավամբ նկատում է Ն. Ակինյանը. «Նորայրի արժանիքն ոչ ըստ արժանուոյն գնահատած պիտի ըլլանք, եթէ դատենք զայն տպագրութեամբ ծանօթ երկասիրութիւններէն միայն: Անոր կարեւորագոյն աշխատութիւնները անտիպ մնացած են»¹¹: Նրանց գոյության ու տեղի մասին գաղափար չի ունեցել ոչ ոք: Ակինյանը փորձել է Ստոկհոլմում ապրող մի հայ երիտասարդի միջոցով գտնել դրանք, սակայն որոնումներն արդյուք չեն տվել:

Նորայրի կորած ձեռագիր աշխատությունների գտնվելու և դրանց գոյության ու տեղի մասին առաջինը հայտարարել է Ս. Լորելին¹², որի հաղորդում-

¹⁰ Այդ նամակագրությունից բազմաթիվ նամակներ հետագայում տպագրվել են հայատանյան տարբեր ամսագրերում: Տե՛ս Ա. Արամյան, «Նորայր Բյուզանդացու նամակները Կարապետ Եզնարիկն», Լրաբեր, 1974, օգոստոս, էջ 85-101, Ա. Վ. Վարդաճյան, «Անտոնան Կարիերի և Նորայր Բյուզանդացու նամակագրությունից», Պատմաբանասիրական հանդես, 1977, թիվ 2, էջ 232-250, Ա. Ղազարյան, Ա. Տեր-Մատեվանյան, «Նորայր Բյուզանդացու նամակագրությունից», Բանբեր Երևանի համալսարանի, 1972, էջ 172-176, Գ. Ղազարյան, «Նորայր Բյուզանդացու անտիպ նամակները», Եջմիածին, 1998, էջ 123-132 և այլն:

¹¹ Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 93:

¹² Սուրեն Երզնկյան, ծածկանունը Ս. Լորելի (1881-1963), բանասեր, հրապարակախոս:

ներից¹³ հայտնի դարձավ, որ նա իր ողջ ունեցվածքը կտակել է «Ֆրեդրիկա Բրեմեր-Ֆորբունդես» կոչվող կանանց բարեգործական ընկերության Ստոկհոլմի կենտրոնին¹⁴, որի անդամ է եղել իր կինը: 1915-1922 թթ. նրա գրադարանն ու ձեռագիր ժառանգությունը պահպել է այդ ընկերության նկուղներում: 1922 թ. հոկտեմբերին ընկերությունը դրանք վաճառել է Գյոտեբորգի քաղաքային գրադարանին, իսկ հետագայում՝ 1960 թ. այն տեղափոխել են Գյոտեբորգի համալսարանի կենտրոնական գրադարան, որտեղ էլ պահպում են առ այսօր:

1956 թ. Ա. Լորելիի միջոցով որոշ վավերագրեր և Բյուզանդացու ուսումնասիրությունների լուսանկարված մանրաժապավեններ («Պատմութիւն աղուանից», «Բառգիրք ստորին հայերէնի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց», «Ժամանակագրութիւն Մատթէոս վարդապետի Խւռհայեցւոյ», «Կորիւն Վարդապետ և նորին թարգմանութիւնք» և այլն) աստիճանաբար ուղարկվեցին ՀՅՍՀ պետական Մատենադարան:

1965 թ. Էջմիածնից Երևան տեղափոխվեց նաև Նորայրի նամականին (նամակների սևագրությունները, օրագիրը և արխիվում գտնվող նյութերի ցանկը), որը Երկար դեգերումներից հետո նույն թվականին Մայր Աթոռին էր հանձնել հայագետ և արևելագետ Հայկ Բերբերյանը (1887 կ. Պոլիս – 1978 Փարիզ): Վերջին հանգրվանը գտնելով Մատենադարանում, հաշվառվելուց և մշակվելուց հետո, այն գրանցվեց որպես համանուն ֆոնդ (Ն. Բ. Փոնդ) և տեղադրվեց արխիվային պահոցում:

2012 թ. նամականու մեջ հայտնաբերեցինք մեծ հայագետի գրչին պատկանող անտիպ մնացած ուսումնասիրություններից մեկը՝ «Վենետիկ և Վիեննա» խորագրով¹⁵, որը նամակի ձեռով գրված լինելու պատճառով, գրանցվել էր որպես նամակ և մնացել աննկատ: Պարզեցինք նաև, որ հոդվածի անավարտ (1-20 էջ) և առանց թվագրման մի օրինակ էլ գտնվում է Գյոտեբորգի համալսարանի կենտրոնական գրադարանում¹⁶:

¹³ Ա. Լորելի, «Նորայր Բյուզանդացու անտիպ ժառանգությունը», Էջմիածնին, 1949, մարտապրի, էջ 64-68: Տե՛ս նաև՝ «Նորայրեան նամականի», Սիոն, 1950, էջ 58-59:

¹⁴ Մահվանից առաջ, Ն. Բյուզանդացու ֆրանսերեն լեզվով գրված կտակի համաձայն, ընկերությանն է հանձնվել անձնական գիտական գրադարանը, բաղկացած հայագիտությանը վերաբերող 1000-ից ավել ընտիր հատորներից, ֆրանս-հայերեն բառարանի 1000 օրինակ, իր բոլոր ձեռագրերը և դրամագրու՝ հարյուր տասը հազար շվեդական կրոն: Տե՛ս Ա. Մինասյան, նշվ. աշխ., էջ 48:

¹⁵ Հոդվածն ամբողջական է և անբերի, գրված է մաքուր, լնդեռնելի ձեռագրով. բնագրի ֆիզիկական վիճակը բավարար է (անվնաս, զերծ որևէ հիվանդությունից): Տե՛ս Ն. Բ. Փոնդ, թղթ. 235, վավ. 251-3:

¹⁶ Ա. Մինասյան, նշվ. աշխ., էջ 66:

Հոդվածը գրվել է 1903 թ. Տիգրան Արքիարյանի¹⁷ և Գրիգոր Մալխասի¹⁸ առաջարկությամբ՝ «Մասիս»-ում տպագրելու համար: Նորայրին առաջարկվել է կարծիք հայտնել Հ. Ա. Ղազիկյանի¹⁹ «Երիցեան եւ Բագրատունի» հոդվածի²⁰ և նույն հոդվածի քննադատության՝ Թաթուլ Վանանդացու²¹ «Ոսկեղարեան Հայերէնն ու Հ. Ղազիկեան»²² հրապարակման վերաբերյալ:

Այդ մասին տեղեկանում ենք նորայրի՝ Մալխասին ուղղված նամակից (գրված 1903 թ. ապրիլի 5-ին), որտեղ իր մտահոգությունը հայտնելով վերո-հիշալ հոդվածագիրների միջև ծագած վերջին վեճի առիթով Վենետիկի և Վիեննայի Միսիթարյանների հերթական ընդհարման կապակցությամբ, գրում է. «Վենետացւոց եւ Վիեննացւոց վերջին ընդհարումն տրամեցուց զիս, «վեր-ջին» կ'ըսեմ իբր րέcent (ոչ վերջին) եւ ոչ իբր dernier (վերջին), զի դժբախ-տաբար պիտի շարունակուի պայքարն, ո՛ գիտէ ինչպիսի փոխադարձ արհա-մարանօք, անարգանօք, նախատանօք: Եւ ատոնք կրօնաւոր են, քահանայ են, աշակերտք հեղագոյն Յիսուսի...: Ամբարտաւան են Վենետացիք, որ չեն ուզեր խոստովանել, թէ փառաւոր է Վիեննացւոց Ոսկեղարու հայերէնին գիտն. ամ-բարտաւան են եւ Վիեննացիք, որ կը համարին, թէ միայն իրենց գրաբար հեղի-նակութիւնք եւ թարգմանութիւնք արժանի են Ոսկեղարու հայերէն կոչուելու: Ղազիկեանի յօդուածն արդարեւ տգիտական է. բայց միթէ տգիտական չէ՝ եւ Մէնէվիշեանի գրածն: ... եթէ առաջարկութիւն շգար ի ձենչ զոր կը սիրեմ, եթէ Մասիսի խմբագիրն ըլլար եղբայր Արքիարի զոր կը սիրեմ, թող կու տալի, որ Վենետացիք եւ Վիեննացիք զիրար խածատեն եւ ուտեն, իրարու գլուխը պա-տառեն, ջարդեն:

Բացառապէս յանձն կ'առնում հրատարակել յօդուած ի Մասիսի Ոսկեղա-րու խնդրոյն առթիւ: Թող Տ. Տիգրան հաճի հրաւէր կարդալ ինձ Մասիսի մէջ՝ որ իբր 40 տարի հայերէն մատենագրութիւն եւ լեզու ուսումնասիրող՝ ես ինչ ունիմ ըսելիք ընդ մէջ Վենետկոյ եւ Վիեննայի յուզուած պայքարին մասին: Շատ ընդարձակ նիւթ է այդ. բայց կարողութիւնս եւ ժամանակս չեն ներեր որ ընդարձակօրէն գրեմ. կը գրեմ միայն զկարի կարեւորն նամակի ձեւով եւ կը յղեմ առ Մասիս»²³:

¹⁷ Տիգրան Արքիարյան (1854-1914, Կ. Պոլիս)՝ Արքիար Արքիարյանի եղբայրը, հրապարակախոս. 1885-1886 թթ. աշխատակցել է Կ. Պոլիս «Արևելին», «Մասիսին», իսկ ավելի ոչ նաև խմբագրել սույն պարբերականները:

¹⁸ Գր. Մալխաս (1863-1925, Կ. Պոլիս)՝ բանասեր, բարգմանիչ:

¹⁹ Արտեմ Ղազիկյան (1870-1932, Պարտիզան)՝ մատենագետ, բարգմանիչ, բանասեր, բա-նասուեց, Վենետիկի Միսիթարյան միաբանության անդամ 1895 թվականից:

²⁰ Տե՛ս Բազմավէպ, Վենետիկ, 1903, հունվար, թիվ 1, էջ 120-127:

²¹ Թաթուլ Վանանդեցի (Գաբրիել Մենեվիշյան), (1864-1936, Կ. Պոլիս)՝ բանասեր, Վիեննայի Միսիթարյան միաբանության անդամ 1882 թվականից:

²² Տե՛ս Սուրբանդակ օրաբերք, Կ. Պոլիս, 26 մարտ, 1903:

²³ Տե՛ս, Մատենադարան, Ն. Բ. ֆոնդ. թղթ. 235 թ, վալ. 131:

Մալիսի 3-ին Մալխասին գրած նամակով հայտնում է, որ ուսումնասիրությունն²⁴ արդեն ուղարկել է Կ. Պոլիս՝ «Մասիսի» խմբագրություն. «Վենետիկ եւ Վիեննա» յօդուածս այսօր յղեցի յանձնարարեալ առ Տ. Արփիարեան: Սաստիկ պիտի բարկանամ եթէ խմբագիրն Վենետացւոց անհաճոյ շըլլալու համար՝ կրծատէ կամ փոփոխէ ուր կը խօսիմ զՎենետիկոյ: Յօդուածին տէրն եւ պատասխանատուն՝ ես եմ»: Ենդրում է նրան, որ անհապաղ գնա խմբագրատուն, «ծայրէ ծայր» կարգա հոգվածը և ստացած տպավորության մասին «ծանուցանէ» իրեն, հայտնելով նաև իր փափագը. «անսխալ ըլլայ հրատարակութիւնն, եւ երեք անգամով, ոչ աւելի»²⁵:

Մալիսի 16-ի ամսաթվով Մալխասին գրված նամակից արդեն պարզ է դառնում, որ ուսումնասիրությունը տեղ չի գտել պարբերականի էջերում: Հեղինակը պահանջում է վերադարձնել աշխատությունը. «Ծնորհ ըրէք վերադարձնել ինձ յօդուածս par retour du courrier գերմանական թղթատարաւ: Յանձնարարելու հարկ չկայ, զի ապահով կհասնի առ իս»: Միաժամանակ հայտնելով ցանկությունը, որ «Մասիսի», «Արեւելքի» կամ «Քիւզանդիոնի» մեջ հրատարակվի իր «հետագայ ծանուցումը», որը հետեւյալն է «Վենետիկ եւ Վիեննա. Ուսումնասիրութիւն նորայրի», 40 մեծադիր երեսք: Գի՞ն՝ 250 ֆրանկ»²⁶:

Ծանուցումը մնաց աննկատ: Որ հոգվածը լուս չի տեսնի, հեղինակն այլևս համոզված էր: Այդ են վկայում նրա դառնությամբ գրված տողերը (հունիսի 8-ին Մալխասին ուղղված իր նամակում). «...զի դատապարտեալ եմ իբրեւ այնպէս ապրելու. իբրեւ այնպէս եւ պիտի մեռնիմ... Բայց ինչպէս յաճախ ըսած եմ սիրելի կնոշ՝ յետ մահուանս պիտի փնտոեն զիս եւ պիտի չգտնեն... Յոդուածս պիտի չհրատարակուի ո՛չ ի Մշակի եւ ո՛չ ի Պարիս. Անահիտ²⁷ Տաշեանի²⁸ սիրահար է, եւ Բանասէր²⁹ Վենետացւոց»³⁰:

Նամակներից արդեն հասկանալի է դառնում, որ ուսումնասիրությունը վերաբերում է Ուկեղարյան հայերնին և գրա շուրջ Վենետիկի և Վիեննայի Միհթարյանների միջև ծագած վեճին, որտեղ հեղինակը նրանց ուղղված քննադատական իր խոսքում անողոքաբար բացահայտել և ի դեռև է հանել նրանց թույլ

²⁴ Հեղինակն այն գրել էր 19 օրում (ապրիլի 10-29) և ընդօրինակել 3 օրում (ապրիլի 30-ից մայիսի 2-ը):

²⁵ Ն. Բ. ֆոնդ, վավ. 134:

²⁶ Նոյն տեղում, վավ. 135:

²⁷ «Անահիտ» հայերեն գրական, գեղարվեստական, հասարակական հանդես. հիմնարվել է Փարիզում 1898-1949 թթ.:

²⁸ Հակովը Տաշյան [Թաշնյան Փրանկիսկոս Մելքոնի], (1866-1933), հայ բանասեր, հայագետ, Վիեննայի Միհթարյան միաբանության անդամ:

²⁹ «Բանասէր»՝ հայագիտական հանդես. հրատարակվել է 1899-1907-ին Փարիզում:

³⁰ Ն. Բ. ֆոնդ, թղթ. 235 Բ, վավ. 137:

տված սխալներն ու անձշությունները, ինչն էլ պատճառ է հանդիսացել հողվածի շնորատարակվելուն:

Իբրև ամփոփում, ներկայացնում ենք բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Դերիկյանի կարծիքը նորայրի ուսումնասիրության մասին.

«Բանասիրական արժեքավոր դիտարկումներով և Վիեննայի ու Վենետիկի լեզվաբանական դպրոցների և գրական լեզվի հանդեպ մոտեցումների կողքին, հողվածում, ցավոք, կան մի շարք անընդունելի բնորոշումներ՝ հանգամանքով, որ ն. Բյուզանդացին, հեռանալով Վենետիկի Մխիթարյան Միաբանությունից, լարված հարաբերություններ ուներ Մխիթարյանների հետ։ Սույն հրատարակման մեջ սակայն, էականը դա չէ, առավել ևս այժմ, երբ Մխիթարյանները վաղուց են հաստատել իրենց արժանի տեղը հայագիտության և հայ մշակույթի բնագավառում։ Կարևորն այստեղ քննված խնդիրներն են, որոնք վերաբերում են Ոսկեդարյան հայերենի ժամանակային սահմանին և դրան պատկանող մատենագիրներին, ինչպես նաև գրական լեզվին և հայերենի տերմինաբանության հետ կապված այն հարցերին, որոնք հանգամանալից ձևով քննվում են ներկայացվող հողվածում»։

Այսօր մեզ հնարավորություն է ընձեռվել ի կատար ածելու հեղինակի փափառ՝ նրա անտիպ մնացած հողվածը³¹ ներկայացնելով հրատարակության, որն էլ անում ենք սիրով ու պատրաստակամությամբ, քանզի «Նորայրի գրչն ամէն բառ, ամէն տող թանկագին է հայ բանասիրութեան համար» (Ն. Ակինյան):

³¹ Բնագիրը՝ (ձեռագիր) ներկայացնում ենք նույնությամբ (անխաթար՝ առանց որևէ կետ, սառուակեա, շակերտ, փակագիծ կամ ընդգծում փոփոխելու):

ՎԵՆԵՏԻԿ ԵՒ ՎԻԵՆՆԱ

Սիրելիդ իմ Տէր Տիգրան

Բարեկամ մը փափագ ունեցաւ գիտնալու թէ ինչպիսի խորհրդածութիւններ աղդեցին ինձի Հ. Ա. Ղազիկեանի «Երիցեան եւ Բագրատունի» յօդուածն, եւ նոյն յօդուածին քննադատութիւնն՝ զոր «Ոսկեդարեան Հայերէնն ու Հ. Ղազիկեան» վերնագրով հրատարակեց Թաթուլ Վանանդացի (Հ. Գ. Մէնէվիշեան):

Դուք եւս փափագեցաք լսել իմ կարծիքս, նկատելով անշուշտ որ Ռոկեդարեան մատենագրի մը վրայ մանրակրկիտ ուսումնասիրութիւն գրողն՝ Ռոկեդարուու շուրջը յուզուած պայքարին մէջ կրնար ունենալ սեպհական տեսութիւններ, Բազմավիպի եւ Սուրհանդակի յօդուածագիրներուն տեսութիւններէն բոլորովին տարբեր:

Ահա կը պատասխանեմ հրաւիրիդ: Բայց եթէ թերթիդ ընթերցողներն՝ որ սովոր են զուարճալի նիւթերու, ձանձրութիւն զգան իմ գրածներէս, կը խնդրեմ շնորհակալ ըլլան տուած «փոքր» ձանձրութեանս. շատ աւելի կը ձանձրացնէի զիրենք՝ խնդրին կարեւորութեանն համեմատ եռապատիկ քառապատիկ ընդարձակութեամբ գրելով:

*Ռոզունիւ սիրոյ
Նորայր Ն. Բիւզանդացի
Մտոքհում, 30 Ապրիլ 1903*

Հ. Ղազիկեանի յօդուածն շատ գեղեցիկ է անոնց համար՝ որ համամիտ են Վենետացւոյն. թէ Հ. Արսէն Բագրատունոյն թարգմանութիւններէն «աւելի ընտիր թարգմանութիւն պիտի չկարենար երեւան բերել եզնիկն ինքնին» (Բազմավիպ, 1903, Մարտ, 122 Ա), եւ կամ՝ որ «եթէ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ գերեզմանէն ելլէին, աւելի ընտիր թարգմանութիւն պիտի չկարենային ընել», ինչպէս ըսեր է «ողբացեալ սիրուն զաւակն՝ Հ. Արսէն Սիւքրի» (անդ, 124 Բ): Նմանապէս Հ. Մէնէվիշեանի քննադատութիւնն յոյժ հմտական է անոնց համար՝ որ «Բագրատունոյն գլուխ խոնարհեցնե»ով հանդերձ իրը «հայագիտի» եւ «քաջ հայերէնագիտի», անսուտ պատգամներու պէս կ'ընդունին Վիեննացւոյն վճիռները, թէ այն «քաջ հայերէնագիտն» ո՛չ միայն «ոսկեդարեան գրող չէ», այլ եւ «միջակ հայերէնագիտ» մը, «ահագին քերականական սիսալ մը» գործող, «խայտառակութեան կոթող մը» տնկող, «զգուեցուցիչ լանտարակոյս գաղղիերէն d'égoûtant] գայթումներ»ով սայթաքող. եւ այս ամենայն՝ Բագրատունոյ գրած քանի մը տողերէն դատելով:

Երկու կողմերն ալ, Վենետիկ եւ Վիեննա, ցորշափ կանխակալ կարծեօք (*préjugé*) բռնուած կաշկանդուած մնան, պիտի շարունակեն «բանակոիւ լինել յոշ ինչ պէտու»՝ հակառակ Առաքելական պատուէրին, պիտի ուրանան փոխադարբար իրարու արդիւնքը եւ արժանիքը, պիտի արհամարհեն անգոսնեն մէկզմէկ, եւ ուրիշ բան պիտի շահին՝ բայց եթէ վնաս, նիւթական եւ բարոյական:

Ա.

1836ին երեք Վենետացի Միսիթարեան վարդապետներ, Հ. Գաբրիէլ Աւետիքեան, Հ. Խաչատուր Սիւրմէլեան, Հ. Մկրտիչ Աւգերեան, յետ յիսնամեայ (1784-1834) տաֆանելի աշխատութեան՝ հոյակապ գործ մը կը հրատարակեն «Նոր Բառդիրք Հայկազեան լեզուի» մակագրաւ, յընդարձակ Յառաջաբանի – զոր նախադրունք կոչած են – ծանօթութիւն տալով թէ ինչ մեթոդի կամ ճանապարհի հետեւած են ի յօրինումն հսկայական մատենին: Յառաջաբանին Հինգերորդ հատուածին մէջ՝ որու վերնագիրն է «Խտրութիւն մատենից եւ մատենագրաց, յորոց քաղեցան բառք Բառարանիս», կը գրեն բազմերախտ Հարքն. «ի լեզուագիտութեան մասին ընտրութեան պէտք են ընդ մատենագիր գրագէտ եւ ընդ հետեւակ, ընդ բառս եւ ընդ ոճս առաջնոց եւ միջնոց եւ վերջնոց: ... Հանրական հմտութեամբ գիտելի է ամենեցուն, զի ընտիր հայկաբանութիւն փայլէ յԱսկիդարու, Սրբոց Թարգմանչաց մերոց, որպէս ի շարագրութիւնս նոցա, ըստ նմին եւ ի գիրս թարգմանեալս ի նոցանէ»: Այս «Ոսկի դար»ս՝ Աւգերեանի եւ իւր երկու գործակցաց համար բովանդակ Հինգերորդ դարն է, այս ինքն՝ Առաջին եւ Երկրորդ Թարգմանչաց համագումար ժամանակն, ինչպէս որոշակի կը յայտնուի Յառաջաբանին Վեցերորդ հատուածին մէջ՝ իւրաքանչիւր մատենի եւ մատենագրի վրայ տրուած համառօտ տեղեկութիւններէն: Եւ այսպէս մինչդեռ Եզնիկ եւ Կորիւն «բուն եւ հարազատ հայկաբան» են, Ազաթանգեղոս «վսեմ եւ հարազատ հայկաբան», Բուզանդ «քաջ հայկաբան», Ոսկերեանի Մատթեան Մեկնութիւնն «սքանչելի հայկաբան», Բարսղի Վեցաւրեան «քաջ հայկաբան», կը տեսնենք որ Խորենացին ալ՝ «գլխաւորն յԱշակերտս Սրբոյն Սահակայ եւ Մեսրոպայ, յԵրկրորդ կարգի Թարգմանչաց, գլուխ երթելոց յԱղեքսանդրիա եւ յԱթէնս, բոլորից գերազանց, կատարեալ է ի հայկաբանութեան եւ ի հելենաբանութեան»: այնչափ կատարեալ՝ որ Եւսեբեայ Քրոնիկոնին «քաջ հայկաբանութեամբ պանծալի թարգմանութիւն»ը՝ կարելի է ի ձեռն Խորենացւոք եղած համարել, ուր ընդ հակառակն Փիլոնի Երրայեցոյ ձառք եւ Մեկնութիւնք թէ պէտ են «թարգմանութիւն հելենաբան բոլորովին՝ ըստ կազմութեան, այլ սքանչելի հայկաբան» [ուրեմն հաւասար Մատթէի Մեկնութեանն յԱսկերեանէ] ըստ ճոխութեան հին բառից», եւ են Երկասիրեալք «յԵրիցագոյն [իմա՞ յԱռաջին] Թարգմանչաց՝ նախ քան զգնալ Կրտսերագոյն դասակցաց [իմա՞ Երկրորդ Թարգմանչաց] յԱթէնս. քանզի հետք բանից եւ բառից Փիլոնի կան յայտնապէս ի գիրս Խորենացւոյն, Մամբրէի եւ Եղիշէի»: Ոչ ինչ ընդհատ եւ Գրիգորի Նազինազացւոյ ձառից թարգմանութիւնն է «գործ Առաջին Թարգմանչաց՝ քաջ հայկաբան [հետեւաբար զուգապատիւ Բարսղի Վեցաւրեանը]՝ խառն ընդ հելենախօսութեան»: Թող Յաճախապատում զրոց «Բուն եւ հարազատ հայկաբանութիւն»ը [հաւասար Եզնրկայ եւ Կորեան]. – Դաւիթ Անյաղթի վերագրեալ իմաստասիրական Հարցմանց³² «Ճշգրիտ եւ վսեմագոյն

³² Քառասուն եւ մի Հարցմունք՝ որ հրատարակեցան յԱրարատ ամսագրի, 1902 Սեպտեմբեր-հոկտեմբեր, երես 939-962. «Դաւիթի հարքացւոյ եւ փիլիսոփայի որ յիմաստասիրական եւ յիմաստասիրեալի հարցուածս»:

[առաւել քան գԱգաթանգեղոս] հայկաբանութիւն»ը. — գԵղիշէի «ընտիր եւ պանծալի ոճն հայկաբանութեան», — Մամբրէի «ընտիր հայկաբանութիւն»ը: Թո՛ղ նաեւ Հինգերորդ դարէն վար իշնելով՝ Պիսիդեայ «հոյակապ հայկաբանութիւն»ը, եւ զայլ սոյնպիսի:

Նոյն ժամանակներուն մէջ, անդին Վիեննական բաժնին Միհիթարեանք, լաւագոյն եւ պայծառագոյն գաղափար չունէին Հայ լեզուի Ըսկե դարուն վրայ, զոր կը գնէին ի Զորբրոգ գարու, Թարգմանչաց անուններն ալ ըստ կարգի առաջնութեան շարելով «Մովսէս Խորենացի, Արծան, Եպոնիկ». (տե՛ս Կիւրզի երրուսաղեմացւոյ կոչումն ընծայութեան, Վիեննա, 1832, Առ ընթերցողս, երես 2): Այլ աճա 1838 ին (կամ 1837 ին) յանկարծ կ'իմանան թէ ցայնժամ սխալեր են հաւատարիմ մնալով այն Հայերէնին՝ զոր 1773 ին իրենց հետ տարած էին ի Վենետիկոյ նախ ի Տրիեստ եւ ապա ի Վիեննա, եւ թէ Ըսկենենիկ Հայերէն կոշուելու արժանի լեզուն՝ մի միայն Սահակայ եւ Մաշտոցի, եւ սոցա ձեռնասուն կամ անմիջական Աշակերտաց լեզուն է ի Հինգերորդ դարու: Մե՛ծ եւ բեղնաւո՞ր գիւտ: Ի՞նչպէս նոր Հայկագեանի գիտուն հեղինակներն հասկըցած չեն զայս՝ երբ կը մաղէին Առաջին եւ երկրորդ Թարգմանչաց բոլոր գրեանքը. Ի՞նչպէս չեն նշմարած՝ գոնէ ընդ աղօտ՝ զլայն եւ խոր անջրպետն ընդ մէջ եւսեբեայ եւ Խորենացւոյ, Ըսկեբերանի եւ Փիլոնի, ես կ'ապշիմ: Սակայն իրաւ է որ մինչեւ ցնիւտոն միլիոնաւոր խնձորներ ինկան խնձորիներէ, եւ «ծանրութեան օրէնք»ը գտնելու փառքն՝ անգոյիացի աստեղաբաշխին պահուած էր:

Ի Տեսականն (*théorie*) ես, աշակերտ Ս. Ղազարու, առաջին եւ ցարդ միայնակ ի Վենետիացւոց, վաղուց ըմբոնած եմ զայն բարձր նշանակութիւնն զոր ունի ընդհանուր Հայ մատենագրութեան համար Վիեննականաց գիւտն, եւ ըստ այնմ կարողացած եմ ընել ինչ ինչ հայկաբանութեան դիտողութիւններ յերկասիրութեանս Հայկական Բառաքանութիւն (Կ. Պոլիս, 1880, ուր տես զերեսսն 27-29, 46-47, 50-51, եւ զծանօթութիւնս 64 երեսին): Վերջին երկասիրութիւնս ալ, Կորիւն Վարդապետ եւ նորին Թարգմանութիւնք (Տփոլիս, 1900), նոյն գիւտին վրայ հիմնուած է:

Իսկ ի Գործականն (*pratique*) քա՛ւ լիցի որ միաբանիմ Վիեննացւոց, քա՛ւ լիցի որ գրաբար գրելու համար՝ առաջնորդ ընտրեմ եւ կանոն բռնեմ գնկարագիր Ըստմանց Հ. Մատաթիայ Գարագաշեանց (Վիեննա, 1845), որշափ ալ ուրիշ կողմանէ մեծարոյ ըլլայ ինծի հեղինակին գիտութիւնն: Սոյն մատենիս մէջ կ'ըսուի յերես 28, թէ Առաջին Թարգմանիչք՝ կամ որ նոյն է Ըսկեղարու մատենագիրք՝ ոչ ինչ թողած են մեզ «զուսումնական իրաց, զՓիղիսովիայութենէ կամ զՄատողութենէ [Mathématiques] այլովքն հանդերձ», այլ մեծաւ մասսամբ ձառեր եւ Պատմութիւններ. թէ Ըսկեղարու մատենագրաց ոճն կատարեալ է ի Պատմականս, ի Վարդապետականս, ի Վիպասանականս [Բանաստեղծութեան կամ Դիւցազներգութեան մէջ, ինչպէս կ'ուզես հասկըցիր. տե՛ս անդ զծանօթութիւն 67 երեսին]: «Բայց (կը յաւելու Գարագաշեան յերես 29) բա-

գում ուրեք ի սոսա լայս ինքն՝ ի թարգմանութիւնս Ագաթանգեղեայ, Բիւզանդայ, Ոսկեբերանի Մեկնութեանն Յովհաննու, Բարսղի Վեցաւրէին եւ ի գործս Կորեանն], մանաւանդ յոմանս փիղսոփայական ճշգութիւն անուանց [=*բառից*] մեկին եւ ուրիշ յայտարարութիւնք [=*բացատրութիւնք, expressions*] սակաւ են. մարթ է ասել թէ այս միայն է թերակատարութիւնն շմարեալ յոճ ժամանակիս այսորիկ, որ յայլոց կուսաց քան զամենայն ժամանակաց ոճս նախամեծար եւ ազնուագոյն է, որպէս վկայեալ է յամենեցունց: Արդարեւ այս թերակատարութիւնն, որ ի լինելոյ յայնժամ տակաւին լեզուին ծաղկեալ յուսմունս գիտութեանց ծագէ, ի նիւթս գեղեցիկ ուսմանց չէ ինչ բիծ, բայց ի վիղիսոփայականս եւ ի ճիշդ ուսումնականս ոչ բիծ միայն է, այլեւ խոշընդուն մեծ»: Գարագաշեան գիտէ թէ ուսումնական նիւթոց վրայ ոչ ինչ գրուած ունինք յԱռաջին Աշակերտաց, որ է ըսել՝ թէ գիտութեանց համար Ոսկեդարեան Հայերէնն աղքատ է եւ չքաւոք. կը խոստովանի թէ Առաջին Աշակերտաց ծառական եւ Պատմական գրուածոց մէջ «բազում ուրեք եւ մանաւանդ յոմանս» կը պակասի «փիղսոփայական ճշգութիւն» բառերու եւ բացատրութեանց՝ որ թերակատարութիւնն է եւ խոշընդուն մեծ. Համայն եւ այնպէս 45-46 երեսներուն մէջ կ'ըսէ որ արդի ժամանակաց Հայերու «արժան է» զԱռաջին Թարգմանչաց լեզուն «քան զայլ առաւել եւ ազնուագոյն հաշուել, եւ զնոյն ընտրել օրինակ բարւոք ճաշակի ի հայ բարբառ»: Այս լեզուիս հետեւած է նա ինքն ի վերոյիշեալ մատենին, (իսուելով զԱռողութենէ, զՀամարողութենէ, զՆշանագրովք Համարողութենէ [*Algébra*] զերկրաչափութենէ, զՓիւսկեան գիտութենէ [*Physique*], զՄենքենական ուսմանէ, զՔիմիական ուսմանէ, եւ զայլ գիտութեանց՝ որ ի սպառ անծանօթ էին Առաջին Աշակերտաց). Հ. Յովսէփի Գաթըրձեան ի թարգմանութեան հոռվմայեցի պատմագրին Կուրտիսի եւ այլուր, եւ այլ Վիեննական Հարք, որոնց համար բաւական չէ Ոսկեդարեան (կամ ինչպէս յաճախ ուրիշ բառով կ'ըսեն՝ Մեսրոպեան³³) լեզուն գտած ըլլալու պարծանքն, եւ գերագոյն պարծանք մ'ալ կ'ուզեն սեպհականել անձանց, որ է՝ նոյն «Մեսրոպեան» լեզուաւ գրելու կարողութիւնը եւ հմտութիւնը զոր իրենք միայն ունին:

Թէ ինչպիսի՛ մեծամեծ անպատեհութիւնք եւ անտեղութիւնք յառաջ կու գան՝ ըստ մասին չքաւոք եւ ըստ մասին թերակատար լեզուի մը միայն կապուելով, եւ իբր խոտան՝ մէկդի նետելով զայն երկայնաձիգ շրջանն Հայ մատենագրութեան որ կը սկսի Հինգերորդ դարու 465-470 տարիներէն եւ կը փակուի Ծնորհալի եւ Լամբրոնացի Ներսէսներով ի կատարած երկոտասաներորդին, դժուար չէր նկատելն, եւ շատ գեղեցկապէս նկատած Գարագաշեանի մատենին:

³³ «Մեսրոպեան» անունն մեծ անիրաւութիւն է առ Սուրբն Սահակ, եւ հաւան շեմ Գեր. Այտընեանի Քննական Քերականութեան 46-47 երեսներուն: Մեսրոպայ Մաշտոցի անզուգական արդինեն՝ այբուբենի գիտն է. հայերէն լեզուի եւ մատենագրութեան զիսաւոր ծաղկեցուցիչն՝ Սուրբն Սահակ: Կամ «Սահակեան լեզու» ըսելու է, կամ զիք «Սահակ-Մեսրոպեան»:

Հրատարակութենէն տարի մը վերջը՝ «նոր ժամանակներուս առաջին հայերէնագէտն, մեծանունն Հ. Արաչն Բագրատունի» (Հայ. Բառաքնն. Երես 103): Յօդուածն «Հայերէն գրաբառ լեզուի յատակութեան վրայ» զոր հրատարակած է Բագրատունին Բազմավիպի մէջ (1846, Յուլիս, Երեսք 196Ա.-204Բ)՝ կը զօրէ եւ այսօր ու ես իսկ մտադիր կը ստորագրէի՝ եթէ Բագրատունին (որ շա՛տ խոնարհ մարդ էր եւ զերիտասարդաց կարծիս բնաւ չէր արհամարհեր, ինչպէս անձամբ գիտեմ,) իմ խորհրդովս՝ նախ եւ յառաջ վեհանձնօրէն վկաչէր ստուգութեան եւ կարեւորութեան համար եղարց գիտին՝ զոր բոլորովին անգիտանալ կը ձեւացընէ, եւ ապա ի գովութենէ Տեսականին անցնէր ի մաքառումն ընդդէմ Գործականին, այլազգ դասաւորէր 201 Ա. իշին մէջ նշանակեալ հետեւելի մատենագրաց ցանկը, չնչէր 197 Ա. իշին 24-34 տողերը, 197 Բ իշին 6-15 տողերը, եւ քանի մը կծու գարձուածներ՝ որ միանգամայն հակառակ կ'եւն 196 Բ իշին մէջ գրուած ազնիւ յայտարարութեան. «Մեր միտքը եւ փոյթը հակաճառութիւն եւ վիճաբանութիւն չէ ուրիշին դէմ, որո՛ւն եւ իցէ, հապապարգապէս ճշմարտութեան եւ օգտի սէր, եւ վնասի դէմը առնել»: Ճշմարտութեան եւ օգտիս էք նպատակ ունեցողն՝ լուսաւորելո՛ւ համար կը բռնէ զշա՞ն, ո՛չ թէ այրելու:

Բազմավիպի նոյն յօդուածն, փոփոխուած այնպէս ինչպէս կը բաղձայի, կը ստանար զիս կատարելապէս ձայնակից եւ ինծի հետ բոլոր անկողմնասէր մարդիկը: Քանզի ո՞ր անկողմնասէրն է որ լիովին իրաւունք շտայ Բագրատունոյն ընդդէմ Գարագաշեանի, երբ սա ինչ բան որ Առաջին Թարգմանչաց գրոց մէջ գտնէ, շար եւ բարի, ճիշդ եւ ոչ ճիշդ, այն միայն աղէկ է ըսելով կ'առնու միւս ժամանակաց ընտիր հայկաբան հեղինակներուն ա՛լ լաւագոյն եւ ազգային բառով եւ ոճով զրուցածը կը նետէ: Զոր օրինակ, ըսեր Ողբերգութիւն, Կատակերգութիւն, Կատակերգակ, այլ երգահանութիւն, Զաղութիւն, (Կոմիկական կամ երգայարդար): — Երբ «ինչ որ Առաջին Թարգմանչաց մատենագրութեանց մէջ չի տեսներ կամ չի գտներ, թէ եւ երկրորդ Թարգմանչաց ժամանակին ու Հինգերորդ — Երկուտասաներորդ գարերուն մէջ շատ վայելուշ եւ հայերէն մտքով ըստած կայ՝ կը մերժէ, չ'ընդունիր, ու անոնց տեղ նորանոր բառեր եւ ասացուածներ կը հնարէ, որպէս թէ Ոսկեգարու մատենագրաց հաւասար՝ լեզուին տէր եւ իշխանն ըլլար: Զոր օրինակ, չ'ըսեր Բանական արուեստ (Կամ Տրամաբանութիւն), Սովորութիւն (Կամ Ունակութիւն), այլ խօսունն, Ըմբռնութիւն»: — Երբ «Առաջին Թարգմանչաց ո՛ եւ իցէ բառը՝ որ թէ եւ ուղիղ մտքով գործածուած ըլլայ, բայց անոնցմէ վերջն եկող մատենագիրներն՝ բառին առմունքը աւելի ճշգելով՝ ուրիշ մտքի առեր ու սովորական գարձուցեր են, Գարագաշեան՝ բուն հին նախնեացը միայն կ'առնու կ'անցնի ու բովանդակ լեզուն եւ ամենուն միտքը կը խառնաբնդորէ: Զոր օրինակ, չի գործածեր Աստուածաբանութիւն, այլ Աստուածախօսութիւն, քանզի հին նախնիք՝ Աստուածաբանութեան ըսեր են Աստուածախօսութիւն. մինչդեռ յետագայ հեղինակ-

ներն ու հիմա մենք՝ Աստուածախօսութիւն ըսելով կ'իմանանք յատկապէս Աստուծոյ խօսիլը մարդարէից հետ, կամ Հրեշտակի ու մարդարէի բերնով ազգի մը հետ, իսկ աստուածային իրաց գիտութիւնը սորվեցընող ուսման՝ ըսեր են եւ կ'ըսենք Աստուածաբանութիւն»:—Երբ «ինչ նոյնանշան բառ որ Առաջին Թարգմանչաց ժամանակին մէջ չի պատահիր, թէ եւ ընտիր ու պատուական բառ ըլլայ՝ կ'արհամարհէ, չի բանեցըներ, ու բանեցընողն ալ իբրեւ թէ հերետիկոսի կամ բարբարոսի տեղ կը դնէ: Այսպիսի խտրողութեան հետեւանքն կ'ըլլայ լեզուին բառերու մթերքը նուազեցընել, որով լեզուն կ'ազգատանայ ու կը տկարանայ: Մուր դնենք որ բնաւ կարելի չէ ապացուցանել՝ թէ այն բառերն հին Թարգմանչաց ատեն չկային, կամ թէ արհամարհէլի են եղեր»: (Ասոր օրինակը ես պիտի տամ երբ խօսքիս կարգն հասնի «Սափրեմ»ի): —Երբ «հնասիրութեան ոգւով յափրշտակուած ու միայն Առաջին Թարգմանչաց բառ գործածելու տենչանքով զանազան բաներ մի եւ նոյն բառով կ'անուանէ, ու մեծ խառնակութեան եւ շփոթութեան պատճառ կու տայ: Զոր օրինակ, *Balance* եւ *Pendule* =Կոռոց. *Dogme* եւ *Théorème* =Հրամանք. *Observation* եւ *Tréorie* = Նկատութիւն»: —Երբ գիտնական բառ մը՝ հին նախնեաց, բայց անյարմար եւ անիմաստ մէկ բառովն կը բացատրէ: Զոր օրինակ, *Météore* = Զբօսուցիկ իր: Եւ կամ երբ «հին նախնեաց մէջ չի գտներ՝ յանձնէ կը յօրինէ, կարծեցեալ հետեւողութեամբ Առաջին Թարգմանչաց, բայց ոչ ինչ պակաս անյարմար եւ անիմաստ: Զոր օրինակ, *Élasticité* = Վարելութիւն, *Elastique* = Վարելի»: Եւ կամ երբ «ինքն իսկ իրեն միաբան չէ, մերթ կը հոռոմանայ ու կը գրէ *Scolastique* = Աքողաստիկեան, փոխանակ ըսելու հայերէն Դպրոցական, մերթ կը հայանայ կը գրէ *Mystique* = խորհրդական, փոխանակ ըսելու յունարէն Միւստիկեան»: (տե՛ս *Բազմավէպ*, 1846, երեսք 197 Բ - 200 Բ):

Ստուգի կարի խոհական եւ արդարացի դիտողութիւններ՝ որ գետին ինկած չեն նոյն իսկ ի վանս Պաշտպան Սուրբ Աստուածածնի, եւ որոնցմէ բաւական օգտուած է Հ. Սրապիոն էմինեան իր Գաղղիերէն-Հայերէն Բառագրոց մէջ (Վիեննա, 1853): Զիան հոն՝ 1. Կոռոց = *Balance*. 2. Երգայարդար = *Comique*. 3. Վարելութիւն = *Élasticité*. 4. Վարելի = *Elastique*. 5. Հմբոնութիւն = *Habitude*. 6. Խօսունն = *Logique*. 7. Ուսումն զբօսուցիկ իրաց = *Météorologie*. 8. Հրամանք = *Théorème*. 9. Երգահանութիւն = *Tragédie*. ինչպէս եւ ոչ 10. Բարբառարան = *Dictionnaire* (Ակադեմիկոս, 44, 46). 11. Ճանաչողականն կամ Գնոմոնիկեանն = *Gnomonique*. (անդ, 166, 168). 12. Մետափիւսկեան փիդիսոփայութիւն = *Métarhysique* (անդ, 295): Որոնց տեղ բարեյիշատակ Հայրն դրած է 1. Կշիռ. 2. Կատակերգ. 3. Զգականութիւն. 4. Զգական. 5. Սովորութիւն. (Անակութիւն). 6. Բանական արուեստ. 7. Օդերեւութախօսութիւն. 8. Տեսուած. Տեսական յառաջադրութիւն. 9. Աղբերգութիւն. Նոխազերգութիւն. 10. Բառագիրք. 11. Արուեստ նկարելոյ զժամացոյցս արեւու (զոր Հ. Մանուէլ Զախարիսեան յիտալերէն Հայերէն Բառարանին, Վենետիկ, 1804, կոչած է

Ստուերագիտութիւն). 12. Բնագանցութիւն: Իսկ *Comédie* և *Théologie* բառերուն գիմաց կը կարդանք թէ Կատակերգութիւն թէ Զաղութիւն, թէ Աստուածախոսութիւն թէ Աստուածաբանութիւն, որպէս զի ո՛չ Հ. Մատաթիա վշտանայ, ո՛չ Հ. Արսէն:

Ուկեղարու Հայերէնն անբաւական է այսօրւան Հայոցս գրական պիտոյքը լեցընելու: Աւասիկ ճշմարտութիւն զոր պարտական են դաւանել Վիեննայի Միսիթարեանք, եթէ սիրող են ճշմարտութիւն: Հնար է որ առ Աստուած աղօթք մը, խրատական, վարդապետական, կանոնական, պատմական մանր գրուած մը, համառօտ վկայաբանութիւն մը, աշխատելով, ջանալով, արիւն քրտինք մտնելով, մեր բոլոր ուշագրութիւնը լարելով, յաջողինք թարգմանել կամ գրել այնպէս որպէս եզնիկ պիտի գրէր. նման Հռովմայ այժմու կեւոն ԺԳ քահանայապետին՝ որ կ'ըսուի թէ կիկերոնեան ոճով կը գրէ արձակ ու ոտանաւոր, փոքր բաներ՝ որ չեն հասնիր Տիտոս Լիւիոսի Հռովմէականին եւ Վիրգիլիոսի Էնիականին ընդարձակութեան: Իսկ նոյն եզնըկեան բարբառով – Գարագաշեանի ձախողակ փորձն մէզ տեղն է – բացարձակապէս անկարելի է որ գրենք լիակատար Քերականութիւն, Բնագանցութիւն, Բնագիտութիւն, Տարրալուծութիւն (*Chimie*), Քիմիագործութիւն (*Alchimie*), Աստղաբաշխութիւն, Բուսաբանութիւն, Գրահաշիվ, եւ այլն: Գիտեմ որ Ուկեղարն սակաւիկ մաս մը կը մատակարարէ մեզ՝ այս գիտութեանց միոյն կամ միւսին բառերուն եւ բացատրութեանց. բայց այն «սակաւիկ» շատ անգամ կամ թերակատար է, չունելով «փիղիսոփիայական ճշգութիւն», կամ լոլծ եւ ճապաղ, թէպէտ եւ գրողն՝ նոյն ինքն սքանչելի եզնիկն ըլլաց: Գիտութիւնն ճշգութեան հետ կը պահանջէ մեզմէ սեղմ եւ ամփոփ լեզու. Գաղղիացին կ'ըսէ. *Le contenu est plus grand que le contenu.* մենք ալ հարկադրուած ենք նոյնպէս ըսել. Բովանդակիչն մեծ էքան գըովանդակեան, թողլով որ եզնիկ միայն գրէ. «Յորում իցէ ոք, այն յորում էն, քան զայն որ ի նմա էն՝ մեծ գտանի»: (Ընդէմ Աղանդոց, 23.) մանուածապատ նախադասութիւն մը 13 բառերով զոր մեզ արժան է 5 բառերու ամփոփել, 2 բառ միայն առնելով յՈւկեղարեան գրչն, քանզ եւ մեծ:

Առաջին Թարգմանչաց գրեթէ բոլոր մատենագրութիւնքն՝ անըստգիւտ եւ ամէնընտիր քերականութեամբ գրուած են: Եթէ Սուլքն Սահմակ կ'անուանէր «Դպրութիւն» զայն զոր յաւուրց անտի Դաւիթ Անյաղթի մենք կը կոշենք «Քերականութիւն», տգեղ բառ, բայց յատուկ. Եթէ Սուլքն կ'ըսէր «Փոխանակ անուան, Միաբար, Բազմաբար», ըստ Դաւիթ Անյաղթի եւ ըստ մեզ՝ «Դերանուն, Եղակի, Յոքնակի», Քերականութիւնն լոկ չորս հինգ բառերով շաւարտիր: Երբ մտավարժ աշակերտներն՝ այնպիսի վեհագոյն վարժապետի շուրջը պատկառանօք կը բոլորուէին որպէս զի Սահմակեան հրաշալի Հայերէնին գաղտնիքները ուսանին, ինչպէս կ'աւանդէր նոցա անմահ Կաթողիկոսն՝ թէ այս ինչ տեղ պարտիք Ապառնի դնել, այս ինչ տեղ Ստորագասական: Թերեւս կ'ըսէր «Ապառնի»՝ որ Ուկեղարու մէջ կը գտնուի, մի անգամ Ապառնի, չորս անգամ

Ապառնիք. բայց տարակոյս չկայ որ չէր ըսեր «Ստորագասական», չէր ըսէր նա եւ Ստորակէտ, Միջակէտ, Ներգործական, Կրաւորական. այլ ի՞նչ. ո՞վ գիտէ³⁴:

Կարեւոր հարկ է ուրեմն որ գիտութեանց վրայ ճառելու կամ ճիշդ եւ որոշ լեզուով գրելու համար Ոսկեդարու վաթսնամեայ անձուկ շրջանակէն դուրս ել-նենք՝ եթէ չենք ուզեր սովամահ մեռնիլ, եւ մեզի պաշար փնտռենք այն Հայ մատենագրաց քով՝ որ ծաղկեցան 465-470էն մինչեւ 1200 տարին: Կամայ ակամայ պէտք է հրաժարինք Ոսկեդարեան ըլլալու փառասիրութենէն եւ դառնանք ըլլանք Միջնադարեան, ինչպէս եղած է Հ. Սրապիոն կմինեան, որ խրատուելով ի Բագրատունոյ՝ Դավիթ Անյաղթի հետ կ'ըսէ Բանական արուեստ, Բնազանցութիւն. Խորենացւոյ հետ՝ Ողբերգութիւն, Կատակերգութիւն, Կատակերգ[ակ]. Ստորին Հայերէնի հեղինակաց հետ՝ Բառագիրք. ինչպէս եղած է Գարագաշեան անգամ՝ որ կը գրէ Աւշակ, Զառիկ (Նկ. Ռւամ. 268), Քիմիական (264), եւ այն: Եւ երբ Միջնադարեան մատենագիրներէն ալ ձեռնունայն մեկնինք, կարօտութիւնն կը բռնադատէ զմեզ որ նոր նոր բառեր ստեղծեք, կամայ ակամայ բարբարուսանք, (քանզի մենք բարբարուսնեք ենք համեմատութեամբ Սահակայ, Մաշտոցի, Եղնըկայ, Կորեան, Աբրահամու Զենակացւոյ,) եւ կամայ ակամայ բարբարոսութեան վերջին աստիճանը հասնինք՝ զոր օրինակ երբ մտաբերենք գրաբար Տարրալուծութիւն շարագրել:

Բ

Հ. Սրսէն Բագրատունոյ սկզբանց եւ վարդապետութեան տեղեակն գիտէ՝ որ այն մեծ մարդն բնաւ յաւակնութիւն չունէր եւ չէր ալ կրնար ունենալ կոշուելու Ոսկեդարեան, բառիս այն նեղ մտօք զոր կը հասկընան Վիեննացի Միխիթարեանք: Հարցընենք իրեն՝ թէ «Մը մատենագիրք եւ մատենագրութիւնք կը ներկայացընեն մեզ հարազատ հայերէն ոճք»: Կը պատասխանէ. Աստուածաշունչ Գիրք, Ժամագիրք, Պատարագամատոյց, Մաշտոց, Շարական, Ազաթանգեղոս, Բիւզանդ, Կորիւն, Եղնիկ, Եղիշէ, Մանդակունի, Փարակեցի, Խորենացի, Յաճախապատում³⁵, Ոսկերեան, Բարսեղ, Սերերիանոս, Կիւրեղ Երուսաղեմացի, — Վարիններէն ալ՝ Շիրակացի, Արշարունի, Խոսրով, Լաստիվերտեցի, Սարգիս, Իգնատիոս, Շնորհալի, Մխիթար Գոշ, որոնց «անխիղճ կրնանք հետեւիլ, թէ բառերուն, թէ ոճերուն, առանց վախնալու որ ազգային լեզուն եւ ոճը աւրենք. վասն զի ասոնք են հաւատարիմ աւանդապահք հին նախնեաց լե-

³⁴ Վիեննական Հայրեն՝ միջնադարեան Ստորակէտ «առգեղ» բառը փորձած են Մեսրոպեան լեզով բառով փոխանակել, եւ ըսած են, ոմն (Հ. Փիլիպոս Ճամբեան, 1846)՝ Սուր սահիս. — Սուր նշանախեց. այլ ոմն (Հ. Եփրեմ Զագնեան, 1850)՝ Կիսասահիս. — Երրորդ ոմն (Հ. Մրապիոն Էմբենեան, 1853)՝ Մրակէտ, Մրաստիս. Սահակ եւ Մեսրոպ ինչ կ'ըսէին՝ պիտի անգիտանամբ միշտ, թէպէս եւ փորձերն հարիւրապալին:

³⁵ Նոր Հայկակեանի հեղինակաց եւ Բագրատունոյն այսափ յարգելն զՅանախապատում՝ կը զարմացընէ զիս:

գուին. բաց ի քանի մը մանր մունր բաներէ, որ հմուտ վարպետը եւ վարժութիւնը կը սորվեցընէ». (*Բազմավէպ*, 1846, 201 Ա): Քիչ մը աւելի բացայաց խօսելու համար՝ Զարգացելոց Քերականութեան 630 երեսին մէջ կ'ըսէ, թէ Հայերէն լեզուի Ոսկի դարն է Հինգերորդն եւ Վեցերորդն, Արծաթի դարն՝ Եօթներորդէն մինչեւ ցերկոտասաներորդն, եւ այս Արծաթի դարուս մէջ կը զետեղուին Շիրակացի եւ միւսներն՝ յաւելմամբ Ղեւոնդ երիցու:

Ապա ի զուր է փնտուել Բագրատունոյ գրութեանց մէջ զայն անխառն գտութիւնն եւ անարատ հայկաբանութիւնն՝ որու նախանձախնդիր է Վիեննական դպրոցն: Այլ է Բագրատունոյ անուրանալի արդիւնքն, անկապտելի փառքն. — իւր անբաւ հմտութիւնն Հայ մատենագրութեան՝ ի Հինգերորդ դարէ մինչեւ ցերկոտասաներորդն, վկայ՝ Զարգացելոցն. — գեղեցիկ մեկնութիւններն նախնեաց մութ տեղերուն, որովք յերեւան կու գայ իւր խորաթափանց միտքն. — բազմապատիկ սրբագրութիւններն աղաւաղեալ հին բնագրաց, որ կը ցուցընեն թէ ինչպիսի՝ անխոնջ ուշադրութեամբ կ'ուսումնափիրէր զիւր պաշտելի նախնիս, օրինակի համար Փաւստոսի Բիւզանդայ 65 լոնթերցուածոց եւ 12 կետագրութեանց մի քան զմի պատուական եւ կարեւոր ուղղութիւններն՝ որոնց եւ ոչ մին մուտ գտած է Վենետիկեան երկրորդ (1889) սպազրին մէջ. — նորոգութիւնն նախնեաց Զափոյն կամ Անյանդ Ոտանաւորին, եւ նոյն Զափով՝ անման եւ աննմանելի ճարտարութեամբ ու գերազանց արուեստիւ թարգմանած յունական եւ հոռվմէական, գաղղիերէն, իտալերէն եւ անգղիերէն հրաշակերտները, թո՛ղ զարձակներն. — բանաստեղծական հանձարն եւ աւիւնն զոր ոչ ոք կարէ ժխտել:

Զայսպիսի մեծ հայագէտ մը եւ լեզուագէտ, քան զոր մեծ երեւած չէ ի Վենետիկ, ի Տրիեստ, ի Վիեննա՝ յորմէ հետէ կայ աշխարհիս վրայ Միսիթարեան անունն, կարելի է «միջակ (!!!) հայերէնագէտ» կոչել. կարելի է իւր միջնադարեան մրոտել՝ նա եւ ուր կատարեալ ոսկեգարեան է. կարելի է իւրեւ նոր զոմն հորենացի քերականութեան տարերաց անգամ անգէտ հոչակել, քերականութեան՝ առանց որոյ մատենագիրն ո՛չ եւս մատենագիր կը կոչուի, այլ բիրտ եւ կոպիտ, ապուշ եւ թանձր շինական: Ամենայն ինչ կարելի է երբ չենք խորհիր թէ զո՞վ կըքննենք, զո՞վ կըգատապարտենք, եւ կը գրենք սապէս բաներ.

1. «Ստէպ ստէպ սափիրէ զհերսն»: Այս ասացուածքը ոսկեղարեան չէ. այլ այն կաստիվերտացւոյն է (տե՛ս էջ 97, տպ. Վենետիկ), որուն քով Հ. Ղազիկեան կը բողոքէր դնել Հ. Բագրատունոյ աթոռը ...: Յետադարեան մատենագիրներէ ասացուածքներ փոխ առնուլ, եւ չուզել անոնց կաճառին մէջ աթոռակից ըլլալ, պարզապէս — զարմանալի է: Ոսկեղարու հայերէնի աշակերտ մը իսկ պիտի ըսէր Բուզանդին հետ (= դասական մատենագիր մը) զհերսն վիրալ (տե՛ս էջ 70, տպ. Վենետիկ) կամ վիրայել [խժաբանութիւն, *barbarisme*] (մօրուաց համար. տե՛ս Եփրեմ, Ա. Հո. էջ 404): «Քանի որ ոսկեղարու լատուկ ոճ մը, ասացուածք մը յետադարեան բառերով կը փոխանակուի, այս վերջինները

գործածողը ոսկեդարեան գրող չ'անուանուիր»։ (Սուրհաղակ, 12/25 Մարտ 1903, առաջին երես, վեցերորդ սիւնակ)։ Ի սէր արդարութեան պէտք էր որ Հ. Մէնէվիշեան աւելցնէր անաշառութեամբ։ «Ոսկեդարեան գրող չէ մեր և Յովլսէփ Գաթըրճեանն ալ՝ որ Կուրտիսի երկրորդ Հատորոյն մէջ (Վիեննա, 1844), Դպրութիւն Ռիթերորդ, Հատուած իններորդ, երես 278, տողք 20-23, գրած է։ «Կզակը նոցա միշտ առանց սափրելոց են. իսկ զմնացեալ մորթ երեսացն ամենեւին իսկ ողորկեալ վիրայեն» [barbarisme]։ Սուրհանդակի յաջորդ թիւերէն մէկուն մէջ գրեց գարձեալ Հ. Մէնէվիշեան։ «Սափրել բառին բուն եւ գլխաւոր նշանակութիւնը նկատողութեան առնելով, համեմատած էի վիրալ եւ վիրայել [barbarisme] բայերուն հետ։ Սակայն Հ. Բագրատունի մագերը կտրել նշանակութեամբ ուզեր է գործածել այս բառը, որ նոյնական սփառէ է։ Սափրելին այս նշանակութեամբը պէտք էր փոքրել գհերս ոսկեդարեան բառը գործածել, եւ կամ նոյն իսկ գերծուկ բառը»։

2. «Զատամունսն ունի սպիտակ փայլուն»։— յառաջ բերուած առաջին հատուածին երկրորդ տողն է այս։ Պահել նշանակութեամբ ունելը՝ միայն մեծատարած իրերու եւ կամ բարոյական իմաստով կ'ըսէ ոսկեդարեան հայր. օրինակ, «զաշխարհ՝ շէն ունել» [Ա. Մակար. գլ. Ը. 15]. «փափուկ ունել զօրն շաբաթուց» [Բ. Մակար. գլ. ԺԵ. 3]։ Պէտք էր ըսել՝ «սպիտակ եւ զինօ պահէ զատամունսն»։ համեմատէ եփրեմ, Բ. Հո. էջ 318, եւ Զգօն, էջ 110։ Վերոյիշեալ տողին շաքըն իսկ հակառակ է ոսկեդարեան հայերէնին։ Այս երկրորդ. (Սուրհանդակ, անդ, առաջին երես, վեցերորդ սիւնակ – երկրորդ երես, առաջին սիւնակ)։

3. «Եւ զգեստը որ դեռ պատուականքն իցեն, ի բաց ընկենու։» Այս ձեւին տակ՝ ԱՀԱԳԻՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՍԽԱԼ ՄԸ ԿԱՅ այս նախադասութեան մէջ։ ՈՉ թէ ՈՍԿԵԳԼՐԵԱՆ ՀԱՅԵՐՔԻՆ ԶԵ, ԱՅԼ ԽԱՅՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԿՈԹՈՂ ՄԸ, թէ՝ գրողին եւ թէ իբր ոսկեդարեան հայերէն յառաջ բերողին։ Կամ պիտի ըլլայ, «Եւ զգգեստս որ դեռ պատուականքն իցեն, ի բաց ընկենու», եւ կամ, «Եւ զգեստք՝ որ դեռ պատուականքն իցեն, ի բաց ընկենու» (իբր կրաւորական բայ). բայց այս վերջինն ես կհնարեմ, որպէս զի յանցանքը «Գարգացելոց քերականութեան» հեղինակէն բառնալով Հ. Ղաղիկեանի –ոսկեդարու տկա՞ր պաշտպանին ուսը շալակել տամ։ ՀԱՐԿ է ՅԱՐԱՋ ՏԱՆԻԼ ԱՅՍ ԳԱՅԹՈՒՄՆԵՐԸ, ՈՐ ՋԶՈՒՅՅՈՒՅԻՉԻ ԵՆ. (Սուրհանդակ, անդ երկրորդ երես, առաջին սիւնակ)։

Քննենք զայս ամենայն։

1. «Ստէպ ստէպ սափրէ գհերսն» գրած է Բագրատունին՝ Թէոփրաստեայ նկարագիրք մատենկան (Վենետիկ, 1830) 29 երեսին մէջ, կամ «Բագրամ անգամ սափրէ գհերսն» (անդ, 22), որպէս զի յետոյ գրէ «վիրալ գհերսն» (45), «գերծուն մինչեւ ցմորթ մարմնոյն» (75)։ Որով կը տեսնուի թէ Բագրատունին «Ոսկեդարու հայերէնի աշակերտի (!!!) մը» շափ գոնէ գիտէր հայերէն եւ անտեղեակ չէր «դասական» Բիւզանդայ «վիրամ» բային, ու պարզապէս «պէս-

պիսովթեան» համար գործածած է երկիցս սափրէ: Այսպէս եւ մագերը կտրելու նշանակութեամբ ըսած է «փոքրել զ՞երսն» (24, 39), «զ՞երսն կտրեալ» (73), («Հարթել «գգէսսն», 27): Այս առաջին: – Ճշմարիտ չէ որ Սափրեմ Մետասաներորդ դարու Լաստիվերտեցւոյն սեպհական բառ է: Շատ աւելի հին է այն, եւ իւր հնութիւնն կ'ելնէ մինչեւ Հինգերորդ դարու Երկրորդ Թարգմանչաց ժամանակը՝ հանդերձ ածանցներով. Փիլոնի³⁶ ճառերուն մէջ կը կարդանք քանի մը անգամ «Սափրեմ» եւ «Սափրիմ», մի անգամ «Սափրիշ» (տե՛ս ի նոր Հայկագեանն). Ունի եւ Դաւիթ Անյաղթ «Սափրողականն» (Սահմանք իմաստասիրութեան, Պրակ Դ. 148): Ջանց կ'ընեմ յիշատակել զվկայութիւնս այլ մատենագրաց՝ որ նոյնպէս երէց են քան զԱրիստակէս Լաստիվերտեցի: Այս Երկրորդ: – «Սափրեմ»ի անգոյութիւնն Ոսկեգարեան գրուածոց մէջ որ առ մեզ հասած են՝ փաստ չէ թէ Ոսկեգարուն անծանօթ էր այդպիսի բառ, եւ միայն «Վիրամ»ն ծանօթ. ու ամենայնիւ իրաւունք ունի Բագրատունին՝ ուր կ'ըսէ թէ բնաւ կարելի չէ ապացուցանել որ Երկրորդ Թարգմանչաց մատենագրութեանց մէջ միայն պատահած բառերն Առաջին Թարգմանչաց ատեն չկային, կամ թէ արհամարհելի են եղեր. (տե՛ս ի վեր անդր): Ի՞նչ հաւաստիք ունինք որ Սահակայ եւ Մեսրոպայ ձեռնասուն աշակերտաց գրական գործունէութիւնն՝ լոկ այժմու յիսուն կամ վաթսուն հատորներով աւարտած է, եւ թէ նոցա ուրիշ շա՞տ եւ շա՞տ մատենագրութիւնքն կորսուած չեն ի սպառ: Ո՞վ կարող է պնդել թէ անհետացեալ մատենագրութեանց մէջ «Սափրեմ» բայ չկար, գէթ յասորի լեզուէ թարգմանութեան մը մէջ. քանզի մեր «Սափրեմ»ն ոչ այլ ինչ է եթէ ոչ ասորական բայն Sapar, որ կը նշանակէ եղերծ, վիրաց, ուամկօրէն ածիլեզ (կատարեալ եզակի երրորդ գէմ): Ասորեքն Հին Կտակարանին մէջ բազում ուրեք կը գտնուի Sapar, ուր հայերէնն կ'ըսէ «փոքրեմ» (Բ. ԹԳ. ԺԴ. 26. ԺԹ. 24). «խզեմ» (Երեմիա, ԽԸ. 37). «Անաւարացուցանեմ» (Եղեկիէլ, ԽԴ. 20). «Կտրեմ» (Յովե, Ա. 20), զոր իսիւքիոսի թարգմանիչն ըսած է «Սափրեմ», համեմատ ասորւոյն: Նոյն Sapar բայէն է եւ Saparo = Փիլոնի «Սափրիշ»ն («Վարսավիրայ» թարգմանուած ի գիրս Դատաւորաց, ԺԶ. 19. յեղեկիէլ Ե. 1). տե՛ս Payne Smith, *Thesaurus Syriacus*, Ակմքաթ նշանագիր, էջք 2706-2707: Երբ Բյուզանդայ գրոց մէջ՝ որ ըստ իս թարգմանեալ է յասորւոյն, կ'ընթեռնունք «Նրան» = ասորեքն Niro, լատիներէն Gladius կամ Ninro, Ninoro³⁷ լատիներէն Acinaces («Դաշոյն» թարգմանուած ի գիրս Յուղթայ, ԺԳ. 8. տե՛ս Payne Smith, անդ,

³⁶ Փիլոնի հայերէն թարգմանութեան ժամանակին համար գրեց Հ. Գրիգորիս Գալէմբերեան (Հանդէս Ամսօրեալ, 1896, Սեպտեմբեր, 281 Ա). «Փիլոնի լեզուն կ'աղաղակէ որ է - է դարէն յառաջ կարելի չէ դնել»: Եթէ Հ. Տաշեան անդիմադրելի փաստերով հաստատէ զայս լիս մատենին որ ընդ մամլով է, հրապարակաւ պիտի խոստվանիմ որ ես առնենասոգէս եմ: ³⁷ Գերմանացի ուսուցչապեսն Հիւշշման գիտէ հայերէն «Սափրեմ» = ասորերէն Սափրա. բայց չի գիտէ «Նրան» = Նիրո, կամ Նինրո, Նինորո. տե՛ս Հանդէս Ամսօրեալ, 1893, Յունիս, 1896, 187Բ-188 Ա:

Նուն նշանագիր, էջք 2361, 2362), եւ կը տեսնենք որ Դաւիթ Անյաղթ ի Քերականութեան Դիոնեսիոսի Թրակացւոյ եւ ի Մեկնութեան Արիստոտելի Պէրիարմէնիասին (Պրակ Ա. 498) կը գործածէ Բիւզանդայ ասորական «Նրան»ը, ինչո՞ւ շընդունինք որ ուրիշ Ոսկեգարեան մատենագրութեան մէջ գտնուած ասորէրէն «Սափրեմ»ն ալ կրնայ անցած ըլլալ ի գիրս Երկրորդ Թարգմանչաց: Ես շունիմ Հ. Մէնէվիշեանի տարապայման խղճմտութիւնը, եւ «Սափրեմ»ի նման հին եւ պատուական բառերու գործածութեանն համար միջնադարեան շեմ անուաներ ո՛չ զիագրատունի եւ ո՛չ զ Գաթրութեան: Մի եւ նոյն աւելորդ խղճմտութիւնն է որ իմ Գաղղիերէն-Հայերէն Բառարանիս «Ստուգն» (*oesophage*) բառը՝ դատապարտեց իբր «ստորին մատենագրութեանց» բառ Ամսօրեալ Հանդիսի մէջ (1887, Մարտ, 43 Ա). բայց դատապարտողն կը իննայէր ինձի եւ իրեն՝ եթէ միտ գրած ըլլար որ ցարդ Փիլոնի, Նիւսացւոյ, Նեմեսիոսի գրոց մէջ հանդիպած Գանգ, Խաղճախուղճ, Ծնչաբեր երակ, Ծնչերակ, Փայծաղն անդամազննական բառերն՝ յերեւան ելան Ոսկերերանի նորագիւտ «դասական» թարգմանութեանց մէջ³⁸: Այս երրորդ: — Թէոփրաստե բնագիրը քննեց արդեօք Հ. Մէնէվիշեան որ աշնչափ վստահութեամբ կը խօսի թէ «Հ. Բագրատունի մազերը կտրել նշանակութեամբ ուզեր է գործածել «Սափրեմ» բառը, որ նոյնպէս սխալ է, եւ պէտք էր կտրել գհերս ոսկեգարեան բառը գործածել, եւ կամ նոյն իսկ գերծուկ բառը»: Յունարէն կյրέօ կը նշանակէ գաղղիերէն Raser. Իսկ keiro թէ Couper le poil, թէ Raser ժամանակս չներեց որ Երթամ յԱրքունի Մատենադարան բաղաքիս, եւ ստուգեմ ի Թէոփրաստեայ բնագրէն թէ յոյնն ի՞նչ բառ ունի հոն ուր Բագրատունին գրած է սափրէ. բայց ձեռքս է գաղղիերէն թարգմանութիւն La Bruyère երեւելի մատենագրին, ուր գրած է. «Celui enfin qui veut plaisir se faire raser souvent). (Les Caractères de Théophraste, traduits du grec par La Bruyère, chapitre V, Du Complaisant, ou de l'Envie de plaisir. Աւասիկ երկու քաջ հելենագէտք ածիկել հասկըցած են Թէոփրաստեայ բառը, եւ ոչ մազերը կտրել. թո՞ղ որ բոլորովին ընդունայն հոգածութիւն է նստել ուսուցանել հայ թարգմանչին՝ թէ «ոսկեգարեան»ն մազերը կտրելու համար «փոքրել գհերս» կ'ըսէ, քանզի տեսանք որ երկու անգամ «փոքրել գհերսն» գրած է Բագրատունին: Այս շորրորդ: — «Վիրայեմ» բառ չկայ

³⁸ Բառարանիս մէջ Paresseuk շորենտանայն հայերէն անուն դրած եմ Հեղգերէ, որու համար դիտողութիւն կ'ընէ Հ. Մէնէվիշեան (Կենդանաբանութիւն, Վիեննա, 1897, երես 95). «Նոր բարդութեամբ Հեղգերէ կ'անուանեն ումանք այս կենդանին, բայց նիշդ չէ. վասն զի երէ որսի անասուն է» [գլ. Gibier]: Անճշդութիւնն կամ տղիտութիւնն՝ Ոսկեղարու մատենագրաց է եւ ո՛չ նորայիս. տե՛ս Երէ Ռ' եւ է անասուն = գաղղիերէն Animal, Սիրաֆ, ԺԳ. 19. — Խոկ. Մտք. 270. — Ա. Տիմ. 112 (ուր սխալ է «երր է»). տե՛ս Հայ. Բառամնն. Երես 44, թի 15). Բ. Տիմ. 176, տող առաջին. — Երք. 524, տող Երկրորդ, ի ստորէ: Տե՛ս եւ յիմ Բառագիրս ի կարգի Animal բառի. L'homme est un animal raisonnable. Մարդ է կրէ խօսուն (բայ Ոսկերեւանի բարգմանչին). Մարդ է կենդանի բանական կամ բանաւոր (ըստ Փիլոնի, Դաւիթ Անյաղթի, Նեմեսիոսի):

Հայերէն լեզուի մէջ. «Վիրայեմ» (փոխանակ «Վիրամ»)՝ խժաբանութեանց ամենէն անձունիներէն մէկն է: Եփրեմի Մեկնութեանց անհմուտ ընդօրինակիչն՝ ի գիրը սխալմամբ Ե կարդալով գրած է, «Եկն էջ Մեծփիրոսթէ ընդ առաջ Դաւթի՛ ոչ զմուրուսն իւր վերացեալ, եւ ոչ զ՞անդերձսն իւր փոխեալ». որ Վենետական 1836 տարւոյ հրատարակութեան մէջ (Հ. Ա. 404) տպագրութեան վրիպակաւ, սխալ սխալի վրայ, փոխուած եղած է վերացեալ, «յ», փոխանակ «ց». բայց նոր Հայկազեանն Վերանամ բայի վկայութեանց մէջ կը գրէ «վերացեալ (այսինքն վերացուցեալ յապաւմամբ)»: Իսկ Հ. Մանուէլ Զախշախեան (Բառգիրք Հայ եւ հտալական, Վենետիկ, 1837) հետեւելով Եփրեմի տպագրին, կարծած է տարակուսանօք թէ վերայեալ՝ է թերեւս անցեալ գերբայ վերայեմ բայի, ու կը գրէ. «Վերայեմ. սապիրել, յարդարել»: Գաթըրճեան չի հաւնիր «Վերայեմ»ի, կը սրբագրէ «Վիրայեմ», ու կը թարգմանէ ի մատենին Կուրտիոսի. «Զմնացեալ մորթ երեսացն ամենեւին իսկ ողորկեալ վիրայեն»: (տես ի վեր անդր). նմին միաբան եւ Հ. Սրապիոն իմինեան. «Ras, rase Գերծեալ. Վիրայեալ: Առձեռն Բառարանի երկրորդ տպագրութիւնն ալ, վարանելով երկու ձեւերուն մէջ, կը դնէ «Վերայեմ կամ Վիրայեմ. տես Վիրամ»: Մինչեւ որ անտպան ուրեմն, 1866ին, Հ. Արտէն Այտընեան կը գտնէ զուղիղ ընթերցուածն, եւ ես, 1903 ին, ի մութ խորշէն՝ ուր անտես ի մարդկանէ ինկած կեցած է Այտընեանի սրբագրութիւնն՝ կը հանեմ զայն ու կը դնեմ յաշտանակի. «Զգօնի կարգէն ուրիշ տեղ մ'ըսուածը Հարկ էր որոշակի նշանակել, տե՛ս Եփրեմ, Հ. Ա. 404»՝ Զմուրուսն վերացեալ, յայտնապէս գրչի սխալ է փոխանակ վիրացեալ (փոքրեալ): Քննական Քերականութիւնն, երես 69, ծանօթութիւն 15: Այս Հինգերորդ: «Գերծում Ոսկեդարու եւ յետ Ոսկեդարու մատենագրութեանց մէջ՝ Բագրատունին եւ ես այնպէս գիտենք որ ածիլել կը նշանակէ (տես ի վեր անդր), եւ ոչ մագերը կտրել: Այս վեցերորդ: Շարունակենք:

2. «Զատամունսն ունի սպիտակ փայլուն», կը կարդանք յերես 29 Թէոփրաստեալ: Ճշմարիտ չէ թէ «Պահել նշանակութեամբ Ունելը՝ միայն մեծատարած իրերու եւ կամ բարոյական իմաստով կ'ըսէ ոսկեդարեան հայը, եւ ալետք էր ըսել՝ Սպիտակ եւ ջինջ պահէ զատամունսն»: Ի՞նչպէս չէ տեսեր Հ. Մէնէվիշեան՝ որ իւր իսկ յիշած մատենագիրներէն՝ եթէ մին (Զգօն, ճառք, Զ. 110) կ'ըսէ «Զինջ պահէ զգէն իւր», միւսն (Եփրեմ, Թարգմանութիւն Աւետարանի, 318) ըսած է «Զտել եւ ջինջ ունել զգէն իւր»: Բագրատունոյ «ունի»՝ ուկեդարեան է ուրեմն, նոյնպէս «սպիտակ փայլուն» բառերն, զորս «սպիտակ եւ ջինջ» սրբագրելու պատճառ չեմ տեսներ. համեմատէ. «Փոխեցաւ հանդերձ նորա եւ եղեւ սպիտակ փայլուն». Ղուկաս, Թ. 29. «Եւ ձորձք նորա եղեն փայլուն սպիտակ յոյժ»: Մարկոս, Թ. 2: Այս եօթներորդ: Շարունակենք:

3. Զարգացելոց Քերականութեան (1852) Յառաջաբանին մէջ կը ծանուցանէ Բագրատունին՝ որ քառասո՞ւն տարի «անընդհատ» պարապեր է հայ բարբառոյն ուսման, եւ թէ «մեծաւ երկիւղածութեամբ» հազիւ հազ համարձա-

կեր է ի «գուղնաքեայ երկասիրութիւն» Քերականութեանն, յուսալով որ իւր «մարդկօրէն թերութեանց եւ վրիպանաց՝ ներողամտութեան» կը հանդիպի: Զկայ ոչ մի մեծաբանութիւն, ոչ մի յոխորտանք, ոչ մի յաւակնութիւն, ընդ հակառակն: Բայց Բագրատունին եթէ խոնարհամիտ մարդ էր, անմիտ չէր, ու չէր կրնար բնաւ երեւակայել որ 22 տարի յառաջ չգործած մէկ ոճքին համար, (քանզի հայցականի տեղ ուղղական դնելն ուր հայցական կը պահանջուի՝ յանցանք չէ, այլ ոճքը,) չէր կրնար բնաւ երեւակայել, կ'ըսեմ, որ օր մը մեծամեծ նախատանօր պիտի լուացուէր ի Վիեննական եղբօրէ: Թէսփրաստեայ թարգմանիչն մասնաւոր փոյթ ունեցած է մի անգամ ըսածը երկրորդ եւ երրորդ անգամ նոյն բառերով շկրկնելու. երկու օրինակները արդէն տեսանք «Սափրեմ»ին առթիւ. ուրիշ օրինակ մ'ալ յաջորդդ է. «Եւ գհանդերձան մինչ չեւ հնացեալ ստէպ փոփոխէ» ըսելէն ետքը յերես 22, «պէսպիսութեան» համար գրած է յերես 29. «Եւ գգեստք որ դեռ պատուականքն իցեն՝ ի բաց ընկենու», ՀԱՐԱԴԱՏ ՈՍԿԵԴԱՐԵԱՆ Զեի, որու կը պատահինք ի Բարսովի Վեցաւրէին, Երրորդ ձառ, երես 46. «Ամենայն ինչ որ դիւրաւ անկանի ի բուռն՝ ընդ արհամարհանս ունիմք». Յարաբերեալը (Ամենայն ինչ, Զգեստք) Յարաբերականին (Որ) հոլովն առած, իւր բայէն (Ունիմք, ընկենու) անկախ, փոխանակ գրելու Զամենայն ինչ, Զգեստք: Զայս ըսողն ես չեմ, եւ ոչ իսկ «Զարգացելոց»ի տղմաթաթախ հեղինակն. այլ Զալլիսեան-Այտընեան Քերականութիւնն (Վիեննա, 1885), երես 353: Մ'որ մնացին ՈՉ ԹԷ ՈՍԿԵԴԱՐԵԱՆ ՀԱՅԵՐԻՆ ԶԵՅԵՐԻՆ ԶԵՅԵՐԻՆ ՔԵՐԱԿԱՆԵԿԱՆ ՍԽԱԼ, ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹԵԱՆ ԿՈԹՈՂ, ԶԶՈՒԵՅՈՒՅԻՉԻՉ ԳԱՅՅՈՒԻՄ վճիռներն: Այս ութերորդ եւ վերջին:

Գ

Թողունք սակայն գշ. Արսէն Բագրատունի, եւ անցնինք Վիեննայի Միահիմքանց «Մեսրոպեան հայկաբանութեան»:

Ստո՞յգ է որ Վիեննական դպրոցն «ոսկեղէն լեզուին ճշգրիտ հետեւութեանք բաւական ընդարձակ նոր մատենագրութիւն մ'ընծայեցուց», ինչպէս կը հաստատէ Զալլիսեան – Այտընեան Քերականութիւնն յերես 515: Պատասխանը նա՛ միայն կարող է տալ որ ունի այդ «բաւական ընդարձակ նոր մատենագրութեան» ամբողջ հատորները, եւ միանգամայն առատ ժամանակ եւ առատագոյն համբերութիւն եւ հմտութիւն՝ հիմնապէս ուսումնասիրելու համար բոլոր հրատարակուած ինքնագիր եւ թարգմանածոյ երկերը: Ես ունիմ երկու մատենագրութիւն, երկու թարգմանութիւն, մէկ բարբառարան, երկու բառագիրք, մէկ Հատընտիր ընթերցուածք, մէկ քերականութիւն, որ հերիք չեն հանրական եւ հիմնական քննութեան համար: Ժամանակական ալ շատ կարճ է, եւ ուրիշ կարեւորագոյն ուսմանց նուիրուած, եւ «կարեւորագոյն» ըսելով կ'իմանամ ոչ զեզնը-կայ եւեթ, այլ եւ «միջնադարեան» կաստիվերտեցւոյ եւ Թովմայի Մեծոփեցւոյ պէս տիսմար մատենագրի ուսումնասիրութիւնն: Նա եւ հմտութիւնս շափաւոր է,

ինչպէս խոնարհաբար յայտարարած եմ այլեւայլ անգամ. շատ բաներ կը տեսնեմ գրուած՝ որ իմ գիտցածներուս չեն համաձայնիր, բայց զի չեմ ամենագէտ՝ կը նշանակեմ առանձինն, թողլով՝ որ անդրագոյն խուզարկութիւնք կամ հմտագոյն հայագիտի հանդիպելու եւ լուսաւորուելու բախտն՝ լուծեն իմ տարակուսանքներս։ Այսու ամենայնի՛ կը համարձակիմ ըսել որ «Ոսկեգարեան նոր մատենագրութեան» հատորներուն մէջ զոր ունիմ ամէն բան «ոսկի» չէ, գոնէ ինծի այնպէս կ'երեւայ: «Ոսկեղէն լեզուին ճշգրիտ հետեւութեամբ» յօրինուած մատենագրութեանց մէջ, իմ չնշին կարծեօքս պէտք չէր որ գտնուէին, 1. Բառեր եւ ասացուածներ՝ որ օտար են Առաջին Թարգմանչաց (խօսքս «Սափրեմ»ին համար չէ). 2. Ոսկեգարեան անեղական բառեր՝ եղականաբար գործածուած. 3. սխալ ընթերցուածներէ յառաջ եկած խժաբանութիւններ, (զոր օրինակ վերյագրեալ «Վիրայէմ»ն). 4. քերականական ծուռ վարդապետութիւններ. 5. Անձիշտ բառեր. 6. սխալ արմատներ (յուղղականն). 7. սխալ հոլովներ. 8. սխալ ուղղագրութիւնն մը. 9. «Նորոց» բառեր եւ ասացուածներ, որոնցմէ ոմանք ապահովապէս գիտեմ թէ «Նորոց» են, իսկ երկուքին համար տարակոյս ունենալով պիտի յիշեմ քիչ մը վարը: Մինչեւ հու՝ «Մեսրոպեան հայկաբանութեան» համար: Իսկ ընդհանուր հայագիտութեան մասին՝ բազում խնդրոց մէջ կը տարբերի իմ գիտութիւնս՝ Վիեննականաց իբրեւ ճշմարտութիւն քարոզածներէն:

Զալլիսեան – Այտընեան Քերականութեան համար ըսուեցաւ (Հաղէս Ամսորեալ, 1887, Սեպտեմբեր, 138 Բ), թէ «խոնարհագոյն դարուց հեղինակութեան նախամեծար կ'ընէ հին ժամանակաց հեղինակութիւնը, եւ Մեսրոպեան հարազատ լեզուին օրէնքներն կ'աւանդէ»: Եթեւ եղական գործ կ'ողջունէի եւ կը յարգէի զայս Քերականութիւն՝ եթէ հեղինակն նպատակ ունեցած ըլլար ուսուցանել զ«Դպրութիւն Ոսկեղէն Հայ բարբառոյ Առաջին Թարգմանչաց», եւ վկայութեանց կամ օրինակաց շարքին մէջ շխառնէր կոշմունս ի Խորենացւոյ, ի Պիտոյից գրոց, ի Ներսիսէ Շնորհալոյ: Բայց խնդիրն այս չէ: Յերեսն 505 վկայութիւնն մը կը բերուի. «Մւր է թէ մեռեալ էաք»: Ուստի՞ է այս Մւր է թէ ձայնարկութիւնն. Ոսկեգարէ, ի Միշի՞ն դարէ: Ես գիտեմ յՈսկեգարէ «Ձե՛ էք թէ», կամ «Ձե՛ էք». (տե՛ս յիմ «Կորիւն Վարդապետ», երես 460, թիւ 86), եւ միայն Հ. Վրթանէս Ասկէրեանի Թովմայ Գեմբացւոյն (Վենետիկ, 1853) 69 երեսին մէջ հանդիպած եմ ցարդ. «Մւր էք թէ անդրէն յուսումն խոնարհէաք քաջ վարուց՝ իբրեւ զնոր ընծայս»: – Դարձեալ, կայ յՈսկեգարու «Հուսկ ուրեմն» մակրայ՝ նշանակեալ յերես 156 նոյն Քերականութեան, եւ իբր «Մեսրոպեան հայերէն» գործածուած ի Հանդէս Ամսորեալ, 1902, Յունուար, երես 14 Բ, տող 20: Մեծապէս շնորհակալ կ'ըլլամ եթէ «Մւր է թէ»ի եւ «Հուսկ ուրեմն»ի տեղերն ցուցուին ինձ յՈսկեգարէ, եւ առ ի շգոյէ ի յետնագոյն նախնեաց³⁹:

³⁹ Արդեօֆ Կիւրդի Աղեմսանդրացւոյ **Պարապմանց գրոցն**, զոր յամին 714 թարգմանած է Սանկտ Պետերբուրգի Առաջնարդական գործադրության կողմէ 1870 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1871 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1872 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1873 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1874 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1875 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1876 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1877 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1878 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1879 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1880 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1881 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1882 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1883 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1884 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1885 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1886 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1887 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1888 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1889 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1890 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1891 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1892 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1893 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1894 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1895 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1896 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1897 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1898 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1899 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1900 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1901 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1902 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1903 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1904 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1905 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1906 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1907 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1908 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1909 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1910 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1911 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1912 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1913 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1914 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1915 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1916 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1917 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1918 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1919 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1920 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1921 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1922 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1923 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1924 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1925 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1926 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1927 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1928 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1929 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1930 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1931 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1932 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1933 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1934 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1935 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1936 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1937 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1938 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1939 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1940 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1941 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1942 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1943 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1944 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1945 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1946 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1947 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1948 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1949 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1950 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1951 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1952 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1953 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1954 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1955 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1956 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1957 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1958 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1959 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1960 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1961 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1962 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1963 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1964 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1965 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1966 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1967 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1968 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1969 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1970 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1971 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1972 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1973 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1974 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1975 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1976 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1977 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1978 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1979 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1980 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1981 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1982 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1983 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1984 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1985 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1986 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1987 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1988 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1989 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1990 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1991 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1992 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1993 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1994 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1995 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1996 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1997 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1998 թ. առաջնարդական գործադրության կողմէ 1999 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2000 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2001 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2002 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2003 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2004 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2005 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2006 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2007 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2008 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2009 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2010 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2011 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2012 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2013 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2014 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2015 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2016 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2017 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2018 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2019 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2020 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2021 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2022 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2023 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2024 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2025 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2026 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2027 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2028 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2029 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2030 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2031 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2032 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2033 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2034 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2035 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2036 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2037 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2038 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2039 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2040 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2041 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2042 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2043 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2044 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2045 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2046 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2047 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2048 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2049 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2050 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2051 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2052 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2053 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2054 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2055 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2056 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2057 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2058 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2059 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2060 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2061 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2062 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2063 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2064 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2065 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2066 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2067 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2068 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2069 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2070 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2071 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2072 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2073 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2074 թ. առաջնարդական գործադրության կողմէ 2075 թ. առաջնա

Նմանապէս կը փափագիմ աներկբայ ըլլալ որ ուղիղ է յետագայ գրուածն. «Եւ այնպէս զերեւելի զհոյակապ քաղաքն ... ի միում աւուր ի միջոյ Յունաց աշխարհին ի բաց յափշտակեցաւ». Կուրտիոս, Հ. Ա. 128-129:

Դ

Ընթերցողներէս անոնք որ համբերութեամբ կարդացին մինչեւ այս տեղ ամէն գրածներս, իմացան – եթէ արդէն չէին գիտեր – որ ես ո՛չ Վենետական դպրոցին հետեւող եմ, ո՛չ Վիեննական դպրոցին: Տակաւին անմորուս պատանի էի երբ գոյացաւ մտացս մէջ այն համոզումն՝ որ Հայերէն լեզուի եւ մատենագրութեան ուսման իսկապէ՞ս բարգաւաճմանն համար՝ երկու Միաբանութիւնք ալ պարտական էին խորտակել իրենց կուռքերը, փոխել իրենց ընթացքը ու նոր հիման վրայ նոր դրութեան համեմատ աշխատիլ: Զայս «նոր հիմ»ս, «նոր դրութիւն»ս՝ բաւականէն աւելի քարոզեցի 1880էն մինչեւ 1901 հրատարակած գրութեանցս մէջ, ի Բառաքննութեան, ի Քննասիրի, ի Տեղեկութիւնսն յԱսողիկ, ի Տետրակին De l'Urgence, յԱմսօրեալ Հանդիսի, ի Լրագրի եւ ի Հանդիսի կովկասու, ուրիշ երեքամսեայ Հանդիսի մէջ: Հմտութիւն միացեալ ընդ քննագատութեան էր այն «նոր հիմ»ն զոր կը բաղձայի. «նոր դրութիւն»ն ալ էր՝ նախ եւ յառաջ ուղիղ ընթեռնուց հին բնագրերը. երկրորդ՝ ուղիղ հասկընալ. երրորդ՝ սրամտութեան նախամեծար ընել զողամտութիւնն (bou sens). չորրորդ՝ ուշագրութիւն, դարձեալ ուշագրութիւն, եւ միշտ ուշագրութիւն: Բայց «Ո՞վ ունկն եղ բանի իմում եւ լուսաւ», մարգարէին հետ ես եւս կ'ըսեմ հառաջելով. ո՞վ կարեւորութիւն տուաւ իմ գիտութեանս, ո՞վ փնտուեց զայն եւ յարգեց: Բաւական չէր որ քառասունեհինգ տարւոյ անգուլ աշխատութեանս ողորմելի պտուղ՝ ընդ ամենայն ստանայի 2200 (երկու հազար երկու հարիւր) փրանկ, 500 Բառաքննութեան համար, 1000 «Կորիւն Վարդապետ»ի, 500 «Հայբուսակ»ի Քննադատութեան, 200 երեքամսեայ Հանդիսի մէջ լոյս տեսած երկու յօդուածներուս: Պետք էր որ արժանի ըլլայի նաեւ անարգական յօդուածի, նախատական պարսաւատերի, արհամարհուտ լուութեան, անուանս չիշատակութեան՝ իրո պիղծ մարդու, խոցութիշ խօսքերու, ծաղրածութեանց, հեկնութեանց: Այժմ ալեւորեալ, յոգի եւ ի սիրտ մահու շափ վիրաւորեալ, խոր վհատութեամբ համակեալ, իբր կոճդ անպիտան՝ քսան տարիէ ի վեր ինկած հեռաւոր սառնամանուտ աշխարհի մէկ անկիւնը, հաւասարապէս օտար եւ Վենետիկոյ եւ Վիեննայի, կը կարդամ նախնեաց քննագրերու նոր հրատարակութիւններ, հայ մատենագրաց ուսունմասիրութիւններ եւ քննադատութիւններ, կը

բառն 0'շ թէ. «Տրոնջին եւ ասէին. Ա՛չ թէ մեռեալ իսմ», Կ.Պոլսի 1717 տարւոյ տպագրին մէջ փոխուած «Ո՛ւ է թէ մեռեալ իսմ»: Քննելի է տպագիրն: Զիարդ եւ իցէ՛ Թովմայ Գեմբացոյն «Ո՛ւ է թէ թէ»ն ուղղագոյն բուի ինձ բան զ«Ո՛ւ է թէ». կարծեմ աշխարհաբար այսօր իսկ կ'ըսեմ «Ո՛ւ է թէ» (եւ ոչ Ո՛ւ է թէ): Զախշախեան ի բառսն Իցի՛ կամ Իցե՛ թէ եւ 0'շ թէ կը գրէ «ուամկօրէն Ո՛ւ է թէ»: Համեմատէ նաեւ Ռոկեղարու «Զի՛ է թէ»ն եւ «Զի՛ է թէ»ն նոյնպէս զյաջորդսղ. «Աս է թէ թէ մեռեալ իսմ»: Եթ Ժ. Թիմ, Ժ. 2. Եփրեմ, Հ. Ա. 162:

կարգամ եւ տրտմութիւն տրտմութեան վրայ կը կրեմ: Կը տեսնեմ զՎենետիկ՝ որ մինչեւ յերկինս կը բարձրացընէ զիւր մէկ հայագէտն. կը տեսնեմ զՎիեննա՝ որ մինչեւ յանդունդս կը գահավիժէ զնոյն հայագէտն, Վենետիկ եւ Վիեննա՝ երկուքն ալ յանուն հայագիտութեան եւ հայկաբանութեան: Միակ մխիթարութիւն որ կը մնայ ինձ այն է թէ Ստոքհոլմի ջրերն իրաւցընէ Աբանայի եւ Փարփառայի ջրերէն աւելի լաւ են:

Աստուծոյ սիրոյն համար, ի՞նչ օգուտ ունի ամուլ եւ սնուտի վիճաբանութիւն բանալ, զատագով մտնել Հ. Արսէն Բագրատունոյ, մեռեալ մը մեռելոյ դէմ պաշտպանել. Եւ ո՞րչափ իրաւցի են Յովհաննու Դրասխանակերտացոյ խօսքերն. «Մի՛ զպարծանս հարցն առաքինութեանց ձեզ բաւական վարկեալ եւ ի նոյն ապաստանեալ՝ ի վիճս խորափիտս ընկզմեցիք. զի թէ հաւր հմտաբար տեղեկութեամբ ղեկաւարեալ իցէ, զի՞նչ աւգուտ յայնմանէ որդւոց բերիցի՝ եթէ ի նաւարեկութեան կորնչցին. վասն զի ոչ ինչ շահ զհաւրն հմտութիւնն կարծեմ լինել որդւոց նաւարեկութեան»: Հայրերն, Զամշեան, Աւետիքեան, Ինձիձեան, Աւգերեան, Բագրատունի, աշխատեցան, յոգնեցան, հատորներ հատորներու վրայ զիգեցին. յափտենակա՞ն փառք եւ պատիւ Հայրերուն: Սակայն գիտութիւնն կանգ առնուլ չի գիտեր. Հայրերուն աշխատանքներն այսօրուան օրս չեն գոհացըներ զմեզ. ո՞ւր է զանոնք կատարելագործողն. ո՞ւր են Զամշեանի գործոյն, նոր Հայկազեան Բառագրոց, Զարգացելոց Քերականութեան երկրորդ տպագրութիւններն՝ սրբագրեալ, փոփոխեալ, ճոխացեալ, խստապահանց ժամանակիս փափականացն եւ կարօտութեանց համեմատ: Ի՞նչ օգուտ ունի «նետուած ձեռնոցն ընդգրկել», Փարպեցւոց ըսածին պէս՝ «կարգել ընդ մեռելոյ», զանալ զուղիղն իբրեւ զսխալ նշանակել: Ի՞նչ օգուտ այս ամենէն:

Քննասիրի Առաջին Պրակաւս ծանուցի որ շատ տարիներէ ի վեր մեծ խորհուրդ մը յղացած էի Քննական հրատարակթեան մեր բովանդակ մատենագրութեան ի Հինգերորդ դարէն մինչեւ յՎեշտասաններորդն. 4-5 հազար ոսկոյ գումար մը յիշեցի. յօժարեցայ «թողով այլոց զիմ գրեան եւ զթղթեան եւ զդրամագուխ», որպէս զի իմ սկսած՝ նովին ոճով շարունակեն: Քանի մը տասնեակ տարիներով ամբարած սրբագրութեանց, դիտողութեանց եւ տեղեկութեանց գանձերս՝ սահմանուած էին Վենետիկոյ, եթէ կարկառած ձեռքս շմերժուէր. մինչ այս մինչ այն՝ Վիեննա փութաց իւր սեպհական ոյժերով ձեռնարկելու Քննական հրատարակութեան մը՝ որ – սապէս ըսեմ – իմ ծրագրիս չի պատասխաներ. Եւ այսօր՝ զայն զոր Վենետիկ քամահեց եւ յոր Վիեննա շութափեց, Տփղիսն է որ կ'ուզէ յափշտակել: Զեր հին շաւղաց վրայ զիարդուպէտ ընթանալով, արհամարհութիւնը՝ գիտութիւն եւ իմաստութիւն համարելով, չէ՞ք կասկածիր որ վախճանն կրնայ ըլլալ կամ «վիճ խորափիտ» կամ «նաւարեկութիւն», ո՞վ Վենետիկ եւ Վիեննա:

Ստոքհոլմ, 10-30 Ապրիլ 1903
Նորայր Ն. Բիուզանդացի

Յ. Գ. Յօդուածիս ընդօրինակութիւնն աւարտած էր՝ երբ ընկալայ (այսօր) Առաջանդակի 15/28 Ապրիլի թիւը, եւ զարմանօք կարդացի յերես առաջին, սիւնակ չորրորդ, տող 6, որ «կենցաղ» ուկեղարեան չէ: Տես կենցաղ ի Կորին, Վարք Մաշտոցի, երես Յ: ի Կորինէ անցած կը համարիմ յԱսկեբերանի Մեկնութիւնն Կողոսացւոց, Ժ. Յորդ. 665, «Թող ընդ կենցաղ անցանէ» եւ նոյն Ասկերանի եսայեայ Մեկնութեանն մէջ, լդ. 207. «Ի բաց կալ ի կենցաղականացաց»:

Յ մայիս. Ե.

Գօար Կազարյան
Неизданное исследование Норайра Бюзандаци
“Венеция и Вена”

Великий арменовед, филолог и лексикограф Н. Бюзандаци оставил немалое научное наследие, большая часть которого все еще не издана. В число этих работ входит также статья “Венеция и Вена” (написанная в 1903г.), которую мы публикуем. В ней Н. Бюзандаци обращается к вопросам, касающимся временных границ Золотого века армянской письменности, творениям авторов этого времени, а также проблемам литературного языка и, в частности, армянской терминологии.

Публикация посвящена 170-летию со дня рождения и 100-летию со дня смерти Норайра Бюзандаци.

Gohar Ghazaryan
Norayr Byuzandatsi's Unpublished Study: *Venice and Vienna*

Great Armenianist and lexicographer Norayr Byuzandatsi left a huge scholarly legacy, most of which remains unpublished to this day. This includes the article “Venice and Vienna” presented here – a valuable work written in 1903. The article deals with chronological boundaries of the Golden Age of Armenian literature, the writings of the authors of this period, as well as terminological questions of the Classical Armenian language.

The present publication commemorates the 170th anniversary of Norayr's birth and the 100th of his death.